Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17624

Б-19

370.1
Б-20

1856

ԲԱՐԵԿԻՐԹ ՊԱՏԱՆԻ

2001

8717

2010

370.1
6-20

ԲԱՐԵԿԻՐԹ ՊԱՏԱՆԻ

ԲԱՐԵԿԻՐԹ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ
ՊՏՈՒՂՆԵՐԸ ԱՐԴԻՒՆԱՒՈՐ ԸՆԵԼՈՒ
ՆԱԽԱՊԱՀԵՍՏ ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՀԽԱՏԱՍՏԻՐՈՒԹԵԱՄԲ

Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ Վ. ՀԱՄՊԱՋԵԱՆ

1004
Ա 6230

Հ.Ս.Ս.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Publiczna Biblioteka
7/II. 1922
Ինվենտար
Ա. ՄՅԱՄԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1856

“Որ սիրէ զԽարատ, սիրէ զանմաստութիւն,,։

ԱՌԱԿ. ԳԼ. ԺԲ. 4։

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ինչպէս որ մարդկային հարստութեանց և գերդասատանական փարթամութեանց բուն սկիզբը և հիմնական պատճառը թէ որ մէկին ուզէ գիտնալ՝ թէ ուսկից սկսած և ինչպէս առաջ գացած է, մի միայն գլխաւոր պատճառ երկրագործութիւնն ու մշակութիւնը կը գտնէ, որով մարդիկ խնամասէր բնութեանը ջանիւ և արուեստին ձեռքով, կոշտ գետինը և անհարթ հողին երեսը փորելով հերկելով, կակուղ և ընդունակ պատրաստելով վարուցանի, նոյնպէս և բուսոց և տնկոց բնականին

մէջ գտնուած վնասակարը, անպտուղ և անպի-
տանն 'ի բաց խլելով, և վայրենին միշտ ընտանիին
հետ պտտու

տասիրել՝ թէ ինչ մաքի վրայ պէտք է ըլլալ մեղ դատաիարակութեան և բարեկրթութեան վրայով. վասն զի ինչպէս որ երկիրը մշակութեամբ, և 'ի մշակութենէ հարստութիւններ, նոյնպէս և մարդկային մտաւոր անդաստանը՝ բարեկրթութեամբ, և 'ի բարեկրթութենէ քաղաքական և դերդաստանական կենցաղոգտութիւններ. և զոր օրինակ գետին մը առանց երկրագործութեան կոչտ, վայրենի, անպտուղ և ամուլ իւր տիրոջը, նմանապէս և մարդս առանց կրթութեան և ուսումնականութեան վայրենի, վնասակար, անարդիւն և անպտուղ է իւր տեառն: Հապա ինչ ասկէց անդին խօսք կրնայի զուրցել դատաիարակութեան և բարեկրթութեան դովելի և օգտակար ըլլալուն վրայով:

Բայց ահա այսպիսի աղգօգուտ և ամենահարկաւոր նիւթի մը վրայ խօսելը ըստ ինքեան ախորժելի և հաճոյական բան մը ըլլալէն 'ի զատ՝ ուրիշ մէկ գեղեցիկ նպատակ և ստիպող շարժառիթ մը կոգնէ և ձեռք կու տայ ինծի առաջիկայ գործառնութեանս. վասն զի քանի որ հիմակուան դարուս աղատասէր հոգին իր ամբարիշտ սկզբունքներով և ծուռ խաբէբայ տրամաբանութիւններով նոր

ԲԱՐԵԿԻՐԹ ՊԱՏԱՆԻ

ԲԱՐԵԿԻՐԹ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒՂՆԵՐԸ

ԲՐԴԻՄՆԱՒՈՐ ԸՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՀԵՍՏ

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆՆԵՐ

Որովհետև միշտ ճշմարիտ է՝ թէ զերդաստանի մը ապագայ երջանկութիւնը որդւոյը բարեկիրթ դաստիարակութենէն կախեալ է, և զի հետևաբար այսպիսի ծնողական կարևոր պարտուց մէջ՝ բովանդակ զերդաստանի մը նկատմամբ, ծնողաց անկարգ և անխոհեմ վարմունքը առ որդիս շատ անգամ կրնայ պատճառ ըլլալ մեծամեծ զբաղդութեանց և անդարմանելի վնասուց, ուստի նախ և առաջ այսպիսի զլխաւոր ան-

կարգութեան մը բաւական դեղ դարման մը սահմանելու դիտմամբ, պատշաճ կը համարիմ՝ի սկզբան քանի մը ընդհանուր և զըլխաւոր ազդարարութիւններ ընել հոս՝ի բարեբաւութիւն ծնողաց յետագայ վիճակին. որպէս զի որդիական բարի դաստիարակութեան մը պտուղը արդիւնաւոր ընելու, յայտմ մասին և ծնողք իրենց կողմանէ պարտուպատշաճ զգուշութիւններն ու խրատները հոգալով և՝ի գործ դնելով, մասնակից ըլլան որդւոց հետ այսպիսի մէկ դեղագոյն վախճանի և գեղեցիկ նպատակի մը՝ որուն հետ կապուած է մասնաւորաց օգուտը և հասարակաց բարին։

ԳԼՈՒԽ Ա.

Թէ որչափ չարաչար կը սխալին ծնողք անհոգութեամբ տղոց դպրոցական դաստիարակութիւն մը տալու. կամ կանոնաւոր ընթացք մը անոնց հոգւոյն վերջը, ուսումնական սահմանեալ տարիները չլրացած՝ դպրոցէն առնելով դարձընելով :

Ա. Աստուածային և մարդկային օրէնքներէն յայտնի է՝ թէ որպիսի անտնօրինելի պարտաւորութիւն մը ունին ծնողք դաստիարակելու զորդիս, ոչ միայն անոնց մարմնաւոր բարի սնունդ մը տալով, հապա ևս առաւել չափահաս ըլլալնուն՝ բարոյական բարի սնունդ մը հոգալով։ Ծնողք մը թշուառ ընելու համար ծնած կըլլար իր զաւակը՝ թէ որ անոր բարեկրթութեան վրայ անհոգ ըլլար. կրթութիւնն է որ տղուն սրտին մէջ բարի բնաւորութիւններուն հիմը կը դնէ, բայց կրթութիւնն ալ իր վախճանին ծառայելու համար պէտք է որ ըստ

կարգի ըլլայ · որովհետեւ իւրաքանչիւր հասակն իրեն ժամանակին համեմատ կրթութիւններ, ուսմունքներ և փորձեր ունի։ Ուշիմ և փորձ ծնողք մը տղուն մատղաշ հասակին և մանկական տիոցը համաչափ՝ կաթին հետ մէկտեղ ուղիղ և հիմնական զիտելիքներուն և բարոյական սկզբունքներուն նախադաղափարը տալէն վերջը, պատանեկութեան տարին կոխելուն՝ պէտք է որ առանց միջահատելու, առաքինի և իմաստուն դաստիարակաց ձեռքը դնէ դանիկայ, որպէս զի բարի սերմունքներն արդէն՝ի մանկութենէ անոր սրտին մէջը ցանած, չափահաս ըլլալուն՝ բարի մշակութեամբ ևս առաւել աճին և հասուննան։

Ծնողք մը որչափ աշխուրջ և զգուշաւոր ըլլայ իր առանձնական դաստիարակութեան մէջ դաւակը մեծցընելու, չի կրնար ընկերական մարդ և բարի քաղաքացի հանել դանիկայ վասն զի կը պակսին պարտուպատշաճ միջոցներ առ այն, և միշտ կը կարօտի բաց՝ի տնական կրթութենէն՝ միանդամայն հրապարակական փորձ և գործնական կրթութիւն ալ տալու անոր, որ աւելի բանուկ և աղդու շարժառիթներով կը սորվեցընէ տղուն նախադասել ընդհանուր

բարին առանձնական չահէն, և պղտիկ հա-
սարակութեան մը սէրը՝ որ է ընտանիքը,
մեծ ընտանեաց մը զոհել, որ է հասարա-
կութիւնը։ Եւ թէև բաղդովի ձեռք իւնայ
յարմար դաստիարակ մը ևս, որ ցանցառ
կը պատահի, այսու ամենայնիւ տղուն հօ-
րենական տանը մէջ ունեցած վիճակը ըստ
բաւականին ընդունակ չեն ներ զանի ա-
ղէկ կրթութիւն առնելու. որչափ ջանայ
դաստիարակը դեղեցիկ տեսական դիտու-
թիւններու ձեռքով տղուն սիրտը կաթե-
ցընել ընկերութեան և մարդավարութեան
պարտաւորութիւնները, ծնողաց չափա-
զանց զիջմունքը, ընտանեաց փայփայան-
քը, վարպետին ստէպ ընտանութիւնը, և
չար օրինակը՝ ձիրքերուն և դեղեցիկ վար-
ժից չարունակ արգելք մը ըլլալով տանը
մէջ, նախանձաւոր առիթներ և չարժիչ
դրդիռներ չեն տար տղուն սրտին՝ փառաց
և առաքինութեան բողբոջը աճեցընելու
և դիւցազնական մեծամեծ գործոց միջա-
մուխ ընելու։ Ուստի այսպիսի տնական
դաստիարակութեամբ սնած մեծցած տղայ
մը՝ անփորձ և անծանօթ գործնական և
փորձառական ճանաչմունքներուն, որ հրա-
պարակական գպրոցներու մէջ միայն կը-

նայ ստացուիլ, հասակակից մանկտոյն հետ և հմուտ վարժապետաց ձեռքին տակը, մարդոց երեսը ելլելուն՝ դիւրինկիկ կրնայ նշաւակ ըլլալ անզուսպ կրքերուն և վատ մոլութեանց։

Ուստի քանի որ այսպէս ծնողք իրենց բընական անբաւականութեանը պատճառաւ անկարող են կրթելու զաւակնին պէսպէս ուսմանց և փորձից մէջ, պէտք կըլլայ որ այնպիսի դաստիարակաց ձեռքը յանձնեն՝ որ հասարակութեան ծախքով յարմար դաստուեր են հրապարակական դպրոցներու մէջ տղաք կրթելու։ Մարդ կրթելը խաղալիք չէ, և ինչչափ դժուար բան ըլլալը կըրթիչներուն միայն քաջածանօթ է։ Այս ծնողաց դաստիարակութեան առջի պարտաւորութիւնը պիտոր ըլլայ աչալուրջ զգուշութիւն մը, աւելորդ և վնասակար սէրը 'ի բաց կտրելով, փոյթ տանին և հոգան տղուն առաջին պատանեկութեան հասակը ուսումնական տարիներուն մէջ՝ որ ցանքի ժամանակ կը համարի մարդկային բարեբաղդութեանց, տնէն հեռացընելով առնեն զնեն զանիկայ այնպիսի դպրոց մը՝ որ ոչ միայն ուսմունքները ամբիծ և համաձայն ըլլայ ուղիղ վարդապետութեանց,

այլև դաստիարակներն ընտիր, առաքինի, խոհեմ և երկիւղած անձինքներ։

Բ. Բայց իրաւացնէ շատ ցաւալի է խէլ մը անխոհեմ ծնողաց տուած վնասը, որ տղան իր ժամանակին դպրոցական ճիշդ ու կանոնաւոր ասպարէզ մը դնելէն վերջը, իրենց ըսեմ, և կամ թէ տղուն անհամբեր և անզուսպ բնաւորութենէն ստիպուած, չսպասելով անոր ուսումնական տարիներուն արդիւնաւոր սահմանուած ժամանակները լմննալուն՝ շուտ մը ետ կառնեն զանիկայ դպրոցէն դեռ անփորձ և անվարժ։ Բայց թէ այսպիսի ծնողք որչափ մեծ և չարաչար կը սխալին, փորձը խիստ շուտ երևան կը հանէ. վասն զի տղան ան քիչ միջոցին մէջ, որ հաղիւ թէ բարեկրթութեան երեսանց դաղափար մը առած, քաղաքականութեան և ուսումնականութեան մէկ քիչ նշոյլը բռներ ու դաստիարակութեան վեր 'ի վերոյ նկարք մը ընդուներ է, ասկէ անկէ քանի մը գիտական բառեր և իմաստասիրական սկզբունքներ կակաղելով և ճամարտակելով՝ առանց և ոչ մէկուն խորունկին թափանցելու, որոդայթալից աշխարքի մը լաբիւրինթոսին մէջ տեղը ասպարէզ կը դրուի՝ [illegible]թեան և

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI. 1922
имени Мясникяна
Ա. ՍՍՀՄ

գիտնականութեան դժուարին փորձերն ը-
նելու։ Դեռ տաքարիւն մանկութեան վտ-
վուն ոգիքները և մոլեկան անդուսպ կիր-
քերը կրթական կեանքի մը կանոնաւոր
սահմանի մէջ լաւ մը չդսպուած չանձած,
հասունութիւն փորձառութիւն մը չբերած,
մեղքէն և մոլութենէն խորշումն, բարոյն
և առաքինութեան ախորժ և միտումն չըզ-
գացած, բարին 'ի չարէն, ճշմարիտը ստէն
որոշելու բաւական ընտրութեան մը տէր
չըլլալով, կարծես թէ ան քիչ ժամանակին
մէջ տղան մէկ կատարեալ գիտնաւոր մը,
կրթեալ քաղաքացի ու եփուն հասուն մարդ
մը եղեր լմընցեր է, ընդհանուր փորձի մը
հանդիսական կը ներկայանայ աչխարքիս
դիմացը։ Բայց այսպիսի նորոսումն և նո-
րակիրթ համբակէ մը ապագային մէջ ինչ
բարելաւութիւն կրնայ յուսացուիլ, կամ
թէ ինչ պտուղ կրնայ քաղել ընտանիքը
և հայրենիքը, վնասէն և ցաւէն 'ի զատ։

Բայց եկէ նայէ որ անխելք և անիմաստ
ծնողքը կարծելով թէ զաւակնին ան մէկ
երկու տարուան մէջ ամէն գիտութիւնները
և որչափ որ գրքեր կան կըլլեր լմնցուցեր
է, ըստ այնմ մեծ մեծ բաներ կուզեն կըս-
պասեն իրմէ. և երբոր տեսնեն թէ իրենց

մնացածին ակնկալութեանը համեմատ արդինքները չելան, և տղան ինչպէս որ անէն խրկեցին, այնպէս անտաշ և անկիրթ դըպրոցէն տուն եկեր է, կըսկսին արհամարհանքը վար դարնել նախատել դպրոցը, ուսումնարանը, ամէն յանցանքը կրթիչներուն անհոգութեանը տալով, իբր թէ տըղուն աղէկ զգուշութիւն չեն ըրեր, լաւ կըրթութիւն տալու անփոյթ եղեր են, որ այնպէս հում անլի մնացեր է։ Բայց ճշմարիտը խօսելով, բոլոր յանցանքը և ամէն պակասութիւնն իրենց անխոհեմութիւնը և անհամբերութիւնն է, որ անկարգ և վնասակար սիրով մը առ զաւակս, կամ բնական կարեկցութենէ խնայելու զաւակնին խիստ կրթական կեանքի մը դժուարութենէն, կամ ծնողական անհամբեր սիրոյն կարօտէն քովերնին և աչքերնուն տակը ունենալու, և կամ տղուն ստէպ թախանձելէն համոզուած՝ խալըսելու գինքը նեղ կեանքէ մը, այսպէս անհամբերաբար առանց սպասելու սահմանեալ տարիներուն, կէս ճամբան քաշեցին առին զանիկայ դպրոցէն, ոստաքանց և անպիտան ընելով նորատունկ ծառ մը՝ որուն ապագայ յոյս կար պտուղ բերելու իրեն և ընտանեացը։ Այդեօք որ

ծառին ժամանակէն առաջ պտուղ տալը տեսնուեցաւ. կամ որ ճաղ առանց թելերը բուսնելու կրցաւ թռչիլ։ Այսանկ ծնողքնե-
րուն այսպիսի ժամանակ մը իրենց զաւա-
կէն ըրած պահպանմունքը՝ ան յիմարական խնդիրքին հետ նոյն սեպելու է, որ դեռ նոր դինուորութեան մտած դինուոր մը՝ որ հաղիւ թէ ոտնփոխ ընել գէնք առնել սոր-
վեր չէ սորվեր, իր դինուորութեանն առջի տարիները ճամբոնոցէն դէպ 'ի պատերազ-
մական ճակատը կանչուի՝ զօրաւոր և կըր-
թեալ պատերազմողներուն դիմացը։ Այս-
պիսի նորուստմն պատանի մը, որ և իցէ կերպով զպրոցին ցանկապատէն տհաս և խակ փրցուած՝ չէ երբէք ընդունակ երևելի մարդ և հայրենօգուտ քաղաքացի ըլլալու. վասն զի անփորձ և որոգայթաւոր աշխարքի մը մէջ ճամբորդութիւն ընելու պարտաւորելով, փոքր վտանգ մը, թեթև փորձութիւն ու պզտի հրապոյր մը և մէկ քիչ շարժում ցնցում մը առաջին քայլափոխին մէջ բաւական կըլլայ զանի ընկճելու դեռին դարնելու, շուտով վնասակար ախտից և ծաղրական մոլութեանց լաւ մը խաղալիկ ընելով զանիկայ. նման դեռաբողջոջ ծառի պտկի մը՝ որուն դեղնելուն թռումելուն հե-

րիք է եղեամ մը, ցուրտ մը, թեթև սա-
ռոյց մը։

Գ. Դպրոցէն ասանկ թերուսումն և դե-
ռավարժ ելլող տղաքը հասարակօրէն ա-
նոնցմէ կըլլան՝ որ հոն սանձի տակ չուղե-
լով կենալ ու չկրնալով տանել կանոնաւոր
կեանքի մը, այնչափ կըսեն և այնքան
վրայ կուտան տկարամիտ ծնողացն առջին
որ վերջապէս ձանձրացընելով կըստիպեն
ժամ մը առաջ կիսկատար հանելու զիրենք
դպրոցէն։ Ասանկները կելլեն սրտերնուն
մէջն ունենալով ատելութիւն մը հոն տեղ
տեսած կրթութիւններուն. բարեպաշտու-
թիւն, համեստութիւն, չափաւորութիւն,
սուրբ խորհուրդներուն ստէպ մօտենալն՝
արհարմարհելի բաներ կերևնայ աչքեր-
նուն։ Հայրերնին որ այնպէս անխոհեմ
գտնուեցան, զաւակացը տրտունջին և պատ-
ճառանացը անկաճ կախելով, շուտ կիմա-
նան իրենց ծուռ ներողամտութեան չարա-
չար հետևանքը, տեսնելով որ տղան դպրո-
ցին մէջ կրթութեան հազիւ թէ երեսանց
դաղափար մը առած, անկերպարան հրէշ
մը ելեր է։ Եւ աշխարքն որ միշտ իր ծուռ
դատմանը և խելքին յարմար դատաստան
կը կարէ, կսկըսի զարմանալ՝ բարէ, տե-

սէք սվիկայ, ան դիտնաւորին ձեռքինտա-
կը և այս ինչ երևելի ճեմարանին մէջ կըր-
թուեցաւ, և ատանկ անդրադէտ, կոպիտ
և կոշտ մնաց։ Եւ չըսեր թէ տղան դպրոցին
մէջ պիծակ մը եղեր էր, բարկացող, կամա-
պաշտ, ստահակ, ծոյլ, որ դանի ազնուա-
ցընելու և անընկճելի բնութիւնը կակղցը-
նելու, փուճ եղան քրտնաջան դաստիա-
րակաց ամէն խնամքն ու ջանացողութիւ-
նը։ Անիկայ ամէն անդամ ազգականները
տեսնելուն՝ շարունակ տրտունջի մէջ էր իր
դասընկերներուն, վարպետներուն վրայով։
Մայրը անոր կցկտուր պատճառանքները
յանդիմանելու տեղը, կը զգուէր կը փայ-
փայէր, և տղուն առջը շատ անդամ հօրը
հետ կառնէր կու տար թէ բանտին մէջ գո-
ցեր է զաւակը. կը յորդորէր հանելու անկէ,
վասն զի չէր ուզեր տեսնել իրեն օր ըստ
օրէ անմխիթար և անորդի հալիլ հատնիլը.
կը դառնար կըսէր՝ քիչ մընալ համբերէ տը-
դաս, ես այնչափ պիտի ըսեմ ընեմ որ վեր-
ջապէս ան խստասիրտներուն ձեռքէն առ-
նեմ խալըսեմ քեզի։ Եւ այսպէս զաւակը
տուն դառնալուն՝ առջի տուած ան գեղե-
ցիկ դասերուն վրայ, նոր դպրոց մալ տանը
մէջ բանալով, իր անխրատ կերպերով և

անմիտ խօսքերովը, խիստ շուտ իմաստնագոյն կընէ զանի. և եթէ թող աշխարքս երթայ զարմանայ, որ տղան անանկ քիչ ժամանակին մէջ ծուռ ճամբաներ չեղելով, խիստ ձեռքն առեր կը քալէ, ուր որ իր անզուսպ կիրքերուն կատաղութիւնը զինքը կը հրէ կը տանի։

Ուստի աս ամէն անկարգութիւններուն, թուլութենէ և անմտածութենէ առաջ եկած մեծապէս վնասակար տղուն բարեբաղութեան և ապագայ յառաջադիմութեանը՝ միանգամ առջևն առնելու համար պէտք է որ ծնողք 'ի սկզբան շրջահայեցութեամբ շարժին, ոչ միայն իր ժամանակին գնելով տղաքը կանոնաւոր դպրոց մը և իմաստուն դաստիարակաց ձեռքը, հապա և որ աւելի զգուշալին է, անդգալի և անկարեկիր աւելորդ սիրոյն և անհամոզելի 'ի պատճառանաց՝ չառնել չհանել անկէ ինչուան որ անոնք սահմանաւոր ժամանակի մը կարևոր հմտութեամբ և պարտուպատշաճ կրթութեամբ՝ ճշմարիտ առաքինւոյ և հայրենասէր քաղաքացիի մը կատարեալ գաղափարը և հարազատ բուն բնազիրը կարող ըլլան վրանին առնել։

ԳԼՈՒԽ Բ.

Թէ բարեպաշտ և խոհեմ ծնողք տղան դպրոցեն առնելուն՝ առջի բերան ինչ ձամբով պիտոր վարուի հետը, և որ անկարգութիւնեն պիտի զգուշանայ :

Ա. Բարեկիրթ պատանին դպրոցէն նորամուտ աշխարհ՝ նմանելով պարտէզէն նոր դուրս ելած աղնիւ տնկի մը՝ լայն և արձակ դաշտի մէջ տնկուելու, թէ որ առջի բերան փորձ պարտիզպանի ձեռքն ընկած չըլլայ՝ որ իր արմատին հետ կպած կենսական հողովն առնէ հանէ, մեծ վտանգի մէջ կըլլայ տեղէտեղ փոխադրուելուն, որ չչորնայ կամ չվայրենանայ : Ասով կուզեմ իմացընել, որ պատանին դպրոցէն աշխարքիս մէջն երևնալուն՝ հոգը տանը մէջ սնած մեծցած տղայէ մը աւելի դաստիարակութեան կարօտութիւն ունի : Քանի որ հին իմաստուններուն ըսածին պէս, առաքինութիւնը միշտ անհաստատ է երիտասարդաց սրտին

մէջ, պատանի նոր ելած աշխարհիս երեսը՝ անսանձ թող տուած իր հաճոյից ձեռքը, թէպէտ՝ի սկզբան պարզամիտ, ամօթխած, համեստ, կրօնասէր ըլլայ, զարմանալի բան չէ՝ որ քիչ ժամանակէն դառնայ ըլլայ անհամեստ, կամակոր, խելքը միտքը անպարկեշտ ախորժակներուն ետևէն։ Միշտ ճշմարիտ ելած է դիտնոց մէջ ան խօսքը՝ թէ զպլրոցէն նոր ելլող տղան առջի բերան ինչպէս որ կը բռնես, այնպէս ալ միշտ կըլլայ քեզի։ Վասն զի անիկայ դեռ աշխարհիս անփորձ, և առաջնորդի կարօտ ըլլալով, որ մարդոց մէջ մտնելու ելլելու ճամբայ ցցընէ, թէ որ զիպուածով ուշիմ և աշխարհս ծնողաց հանդիպի, որ 'ի սկզբան կարող ըլլան հսկել անոր առջի քայլափոխներուն, ահա պատանին առջի առած տեսական դաստիարակութեանը վրան՝ զործնական կրթութիւն մըն ալ աւելցուցած, ընտիր, փորձառու անձ մը, զիտնաւոր և կատարեալ քաղաքացի մը քեզի։ Հապա թէ ասոր հակառակը զժբաղդաբար անխոհեմ և անզգոյշ ծնողաց ձեռքը մնայ, որ տգիտաբար կարող չըլլան հսկելու անոր առջի ոտնփոխներուն բարմութեան մէջը մտնելուն, ու մինաւոր թողնեն զինքը իր

երիտասարդական բնաւորութեանց ու ախ
տաւոր բերմանցը ձեռքը, ահա պատանի
քիչ ժամանակին մէջ մոլի և կրից դերի ե
ղած, անպէտ հայրենեաց և ընտանեաց։ Ասանկով հիմնական դաս
տիարակութիւն մը՝ որուն արդիւնքը բոլո
կենաց մէջ պիտի տեսէր, ծնողաց հսկողու
թեան և մտադրութեանը պակսութենո
անդորձաղիր երեսի վրայ մնալովը խսկոյ
կը փճանայ կերթայ։ Դրամով ծոցը լեցուր
միւսաւոր զլխուն թող զանեկայ ամբոխի
մէջ. խել մը վատաղղի և անղդամ մարդոյ
ձեռքը ձգէ. երկուքումէկ երեսին զարկ
թէ հաստ է, աբեղայ կը հոտի, տանտիկին
ներուն հետ չի դիտեր նստիլ ելլել, անկը
ճէն վար փչէ մենծիդ դէմ ապստամբական
խօսքեր, սեղանիդ վրայ լսէ բարեկամնե
րէդ առաքինութեան բարեպաշտութեան
դէմ ծաղրը. զրքատանդ մէջ գտնէ ան տե
սակ զրքեր՝ որ սիրտը կը հրապուրեն, ե
բեակայութիւնը կը բուընկցընեն անուշ զրը
գիտներով, ապականեալ ախորժակներով
անհաւատ սկզբունքներով. ու ետքը գտնա
գանդամ զաւկէդ՝ թէ քիչ օրուան մէջ
այնքան տարիներուն խնամքն որ զպրոցի
մէջ բարեպաշտութեան և ուսմունքի դե

զեցիկ կրթութիւններուն ծախուեցան, ա-
մէնը պարապ հանեց փճացուց։ Խրատը ընէ
խելացի ծնողաց վիճակած որդի մը՝ կրկին
երջանիկ կը սեպուի. վասն զի երկարժա-
մանակեայ փորձով ստուգուած է որ հրա-
պարակական դպրոցներու մէջ կրթութիւն
առնող տղոցմէ, որն որ խոհեմ խելացի ըզ-
զուշաւոր և աշխատասէր հօր ձեռքը գտնուե-
ցաւ, բարեյաջող ակնկալութիւնները պա-
րապ չէ հաներ բնաւ։

Բ. Անփորձ ծնողք այսպիսի ժամանակ
տղաքնին տունը առնելուն՝ հասարակօրէն
ուրիշ մէկ պակասութեան մէջ կրնար իյնալ.
վասն զի տարիներով զաւակնին քաղցր ըն-
կերութենէն զրկուած ըլլալով, եւելօր ա-
նուշ կու գայ իրենց աւելի սէր փաղաքշանք
տեսնելը, իբր թէ անով առջի քաշած վիշ-
տերնին մոռնալ մը ենթադրելով։ Մասնա-
ւորապէս մայրերը ասոր մէջ փափուկ ու
նախանձաւոր են, ան աստիճան որ զաւակը-
նին որչափ սիրեն, որքան յարգեն, թէև
շատ մը փայփայանքներ ընեն, դեռ բաւա-
կան գոհ չըլլալով, դառնագին մը կը տըր-
տընջեն կրթիչներուն դէմ, թէ զաւակն ի-
րենց պէս ստոյիկեան ցուրտ վարժեր են՝
անզգայ մայրական սիրոյն. և կըսկսին բա-

բեկամաց առջին սրտերնին պարպել. տեսէք, կըսեն, ան աղուէսաբարոյ վարպետները, մէկ տեսակ ճամբայ մը ունին որդիքներուն սիրտը ծնողացմէ բաժնելու և իրենց քաշելու. ան եղանակ գիտեն կախարդել երիտասարդաց խելքը միտքը, որ մանկական ուժի պէս իրենց ձգելով՝ քովերնէն չեն ուզեր թողնել։ Գիտես որ տղաս դպրոցէն ելլելուն՝ լացաւ, և հիմա տանը մէջ բոլոր օրը ուրիշ բան չի խօսիր, բայց եթէ իր կրթիչներուն դասատուներուն վրայ։ Ա.հա այսպիսի անհամ խօսքերով գլուխ կը ցաւցընեն, և խելացի մարդոց ցաւ կը պատճառեն, որ աղէկ գիտեն՝ թէ սէրը փայփայանքին վրայ չէ։

Բայց խորամանկ կեղծաւոր որդիքները ծնողաց աս տեսակ տկարութիւններուն քաջածանօթ՝ չինծու աւելորդ սէր մը ու հազար կերպ շոյելներ փաղաքշանքներ ընել կըսկսին, ինչպէս որ ընդհանուր նորութիւնը կը տանի, չտալ անոնց ան յարգական պատուանունները՝ որ բնութիւնը և կրօնքը կը պահանջէ, հօր մօր բարեկամ կանչել, դուռն ըսել իբրև հաւասարից մէջ, օրը հարիւրաւոր անգամ համբոյրներ տալ. երբ մէկ կողմանէ սրտերնուն մէջ մախանք

և ատելութիւն սնուցանել անոնց դէմ, ծա-
ծուկ զողնալ, ձեռքի տակէն բաներ կառա-
վարել, ու միւս կողմանէ ծաղր ընել անոնց
պարզմտութիւնը։ Ահա որդւոց աս տեսակ
չարաչար զեղծմունքները՝ ծնողաց անկարգ
և անխոհեմ վարմունքէն միայն առաջ կու
գայ. վասն զի զպրոցէն տունը գալուն՝ առ-
ջի բերան անոնց հետ քաղաքավարելու
կերպ չեն գիտեր, կենցաղավարելուն մէջ
սիրելու և սիրել տալու եղանակը չափը չեն
պահեր։

Գ.. Ահա քեզի մէկ ուրիշ անկարգութիւն
մըն ալ՝ որուն վնասաբեր հետևանքը առջի
ըսածէս վար չի մնար։ Զեմ գիտեր ինչ նո-
բելիք մտածութիւններ ծնողաց խելքին փը-
չեր են, որ զաւակնին զպրոցէն ելլելուն
պէս, մէկէն գիւղացնացութեան առնեն
տանին աշունն անցընելու։ Փորձը՝ կենաց
վարպետ՝ կը հաստատէ որ երիտասարդաց
մեծ մասը իրենց բարեկրթութեան պտուղը
գիւղացնացութեան առջի տարին մէկէն
կորսընցընելու կըսկսին։ Թէ որ ասանկնե-
րէն մէկը իշխանի կամ աղնուականի զա-
ւակ մը ըլլար, իրաւցընէ անոր դեղը մըտ-
նելը տեսնելու հանդէս մըն է, որ լաւ երես
կու տայ ծնողաց վատութիւնը։ Ահա կու

դայ նորահասակ պարոնը, առ քեզի հան-
բական խառնակութիւն մը տանը մէջ, մէկ
աղմուկ իրարանցում մը պալատին դուռը,
տնտեսը բարեկելու կը վազէ դիմացը, ծառա-
ները դրան առջին պատրաստական՝ ման-
կահասակ հիւրն ընդունելու։ Հայրը մէկէն
կառնէ կը տանի դանիկայ պատուցընելու
գեղեցիկ սենեակները, զարդարեալ ճեմա-
լիքները, մեծագործ սրահները, խոշոր պա-
հարանները կահով կարասիքով լիք, վեր-
նայարկին պատուհանէն մատով կը ցոյ-
նէ անոր իր լայնարձակ դետինները կա-
լուածները, հոն վարը բուրաստանը ծաղ-
կներով լիք, հոս ծառաստանը ամէն ցեղ
պտղով լեցուն, լեռան միւս կողմը բեղմ-
նաւոր այգի մը, դիմացը դաշտը կանանչով
ծածկուած՝ անասուններն արածելու։ Ասանկ
մէկ մէկ կը համրէ անոր իր ամէն ստա-
ցուածքը անունով տեղով ու եկամուտովը,
և կը դառնայ կըսէ որդւոյն՝ դիտնաս տը-
ղաս, որ իմ վախճանելէս ետև դուն ասոնց
ամէնուն տէր պիտոր ըլլաս։

Պատանին ասոնք տեսնելուն՝ մէկէն հը-
պարտութեան վիրով կըսկսի ուռիլ. հօրը
վերջին խօսքէն ալ չփացած, դինքը անկար-
գութեան տանող ախորժակները մէկիկ մէ-

կիկ հօրն առջեր կը թափէ ըսելով, հանա, հայր, ձի մը կուզեմ. — Բարի է, տղաս, ընտրէ քեզի որն որ կուզես։ Հրացան ու շներ կուզեմ. — Գլխուս վրայ, ապսպրեմ։ Հայր, գիտնաս որ աս աշունը աղէկ մը ժուռ պիտի գամ. — Ատոր խօսք կայ, յայտնի բան։ Բայց ինքիր գլխուս պիտի պտըտիմ, զբօսանքի ժամանակ քովս կարգաւոր չեմ ուզեր. — Ինտոր որ կուզես։ Հօրը աս ե-զանակ գիջմունքը տան մէջ եղողներուն օրինակ մը նէ, որ ինչ ճամբով պիտոր վա-րուին։ Պարոնիկը բաւական է որ կէս բե-բան բան մը ծամծմէ, նշանացի մը սրտին ուզածը յայտնէ, չէ չկայ, ըսածը եղած է. շողոքորթութիւններ, շոյելներ, մեծարանք-ներ հետզհետէ վերջանալիք չունի։ Երի-տասարդ պարոնը դիւրաւտմն այսպիսի փափուկ կեանքի՝ շուտով կը յարի ասոր, դատարկութեան սէրը մէկէն անոր սիրտը կը բռընկի, հպարտութեան ծուխը գլխէն կը ծխի, կիրքերը այսպէս սնեալ փայփայ-եալ, կըսկսին թև առնել թռչել. այնպէս որ գիւղացնացութիւնը վերջանալուն՝ իր առած կրթութիւնները մոռնալով, տուած է գինքը դատարկութեան, թուլութեան, և աստուած չընէ, չըսեմ այլանդակ մոլու-թեան ալ։

Ուստի ահա աս ամէն բաներս լաւ կը հասկըցուի որ աս առջի կենցաղավարութիւններուն մէջ որպիսի զգուշութիւններ 'ի գործ դնելու են ծնողք աս չարաչար անկարգութեանց առջեւն առնելու, որպէս զի չըլլայ թէ դպրոցին մէջ տարիներով և մէկ շատ դժուարութեամբ առաջ եկած բարեկրթութեան բողբոջները մէկէն խանձած թարշամին. հապա 'ի սկզբան խելացի կառավարութեամբ և մտադիր մշակութեամբ մը պաշտպանեալ, երթալով լաւ ևս աճին և հասունանան։

ԳԼՈՒԽ Գ.

Թէ ծնողք որչափ պակասաւոր կը գտնուին, և ծանր պատասխանատուութիւնք ունին. կը մնան որդւոց կոյսման անխոնջամաքառ դէմ դնելով, և միանգամայն դատարակուրելու պարտուց մէջ ինչ ազդարարութիւն ներու կը կարօտին:

Ա. Դպրոցին մէջ կրթութիւն առնելու աշակերտաց դասին մէջ կը գտնուի նախանձելի պատանեկաց խումբ մը՝ որոնք երկնային լուսով մը առաջնորդեալ, աշխարքը և անոր անցաւոր փառքը և վայելմունքը ոտքի տակ առնելով, եկեղեցական կարգաց Աստուծոյ աղնիւ ծառայութեանը կուզեն տալ զիրենք։ Երանի էր ասոնց՝ թէ որ աշխարքը ոտք չդրած և անմեղութեան անարատ պատմուճանը չպլչտրկած իրենց փափաքանացը հետեւէին մենծերուն խրատով։ Բայց ինչպէս որ ասանկներուն թիւը

քիչւոր է, նմանապէս ալ քիչ կը գտնուին աստուածավախ և խոհեմ ծնողքներ, որ աս կոչմանը ձայնին զիջանին որդւոցը. հապա ասոր ներհակը մէկ անվայել և անսովոր ճամբայ մը կը բռնուի։ Վասն զի նայիս որ հայրը աս կասկածը առնելուն՝ մէկէն ձի կը հեծնայ և շտապաւ մը կու գայ կը հասնի դպրոցը, վերակացուին դուռը ձեռք կառնէ, ու մէկ աղմկով, այլայլութեամբ մը կըսկսի երեսէն վեր պոռալ կանչել՝ ինչ, իմ զաւակս ձեռուընիդ տուի որ ազնուական մարդ ընէք, դուք ելաք եղբայր մը հանեցիք ձեզի։ Աս ան ափեղցիեղ բերնին եկածը դուրս կու տայ՝ դողեր, մատնիչներ, կանչելով, ինչպէս թէ որդին մեռնելու տանէին։ Աս հերիք չէ. սպառնալիքով մը տղին դարձած՝ ձեռքէն կը քաշէ տանելու. իսկ տղան թէ և թախանձէ պաղատի և բաղկատարած զրկէ ան սիրելի առանձնութիւնն որ իր անմեղութեան ապաստան ու բարեպաշտութեան հանգստարան եղաւ, թէև պնդէ հաստատէ որ կրթիչներն աս կոչմանը վրայօք բան մը չըսին, խօսք չրացին, ոչ ոք ձեռք ունի ասոր մէջ, Աստուած ինքն է կանչողը և ուրիշ մը չէ, որ՞ն կըսես, ամէնը պարապ, հօրը անկա-

ճը չի մտներ. թէ Աստուած է կանչողը, կը պօռայ, թող փորձը հաստատէ։ Եւ այս-պէս անողորմաբար կը խլուի և տուն կը բերուի խեղճ տղան։

Բանը աս ձևը մտնելէն վերջը, հայրը քրիստոնէի բարի համբաւը պահելու համար, կըսկսի մորմոքիլ մը ցցընել զաւկին վրայ. չէ, որդի, բաղձանքդ չեմ ուզեր ժըխտել, կըսէ, Աստուած չընէ որ կոչումիդ դէմ դնեմ, հապա ինչպէս խելացի հայր մը՝ ապահով պիտոր ըլլամ վիճակիդ խոհեմ դատմունքի մը ընտրութեամբ՝ երջանիկ ըլլալուդ. թէ որ վերէն սահմանուած ես նէ, պատրաստ եմ տալու դքեզ. բայց գիտնաս տղաս, որ այսպիսի որոշմունքներուն մէջն արտորալը աղէկ բան չէ, վերջէն անօգուտ զղջում կը բերէ. նախ պէտք է քիչէն շատէն ճանչնալ աշխարքը, և ետքը թողնել։ Հօրը աս զուրցածներն առ երեսս խելացի խօսք կերևայ, բայց ասկէց ետքը բռնելու ճամբան և ձեռք զարկած միջոցները բոլորովին ասկից տարբեր են։ Վասն զի նախ և առաջ կարգիլէ իրեն սրբոց վարքը կարդալը, պատճառելով թէ ըղձդը չպղտորի. հրաման չի տար եկեղեցականաց հետ երթևեկութիւն ընելու, չի

թողներ ստէպ սուրբ խորհուրդներուն մո-
տենալ, կանացի բաներ են՝ ըսելով. ամէն
զբօսանքի տեղերը կուզէ միատեղ տանել.
որ թատրոնն որ աւելի մեղկ և ապականիչ
է վարուց, որ խաղն ու պարը աւելի թու-
լացուցիչ հրապուրիչ է, կամ՝ որ հարկինքն
աւելի զուարթ, ընկերութիւնը լրբենի, ու
որ նստարանը խաղցողներուն մօտ, հոն
կառնէ կը նստեցընէ. և այսպէս խեղճ պա-
տանին կը դնէ երկու ճակատին մէջ տեղ,
խղճմտանքի՝ որ կը խթէ, և զգայութեան՝
որ կը հրապուրեն։ Ամէնքը զլուխը թափե-
լով և ցաւակցելով իր պարզմտութեանը
վրայ, աղուոր աղուոր խրատներ կու տան.
որն ալ Մենտոր մը ձեւանալով առաջ կը
նետուի, զրքեր կը բանայ կը ցցընէ անոր.
առասպելական բանաստեղծութիւններուն
խիստ անուշը փափուկը կերգուի առջեը.
քաղքին մէջ զուարճալի պարտէզները,
մեծապորթ տեսարանները ժուռ զալ. զիւ-
զաղնացութեան մէջ լեռնային բաղնիքնե-
րուն, ցամաքային որսորդութիւններուն եր-
թալ, որ ազգային երիտասարդաց ծաղիկը
ժողուած են, անտառային ազատութիւնը
քաղաքային հեշտութեան հետ ընկերացը-
նելով, որ աստուածային և մարդկային

սուրբ նուիրական կապը ևս խզելու վտան-
գին մէջը կը դնէ։ Ա.ս ասանկ ըլլալէն վեր-
ջը, գնա նայէ թէ տղան ինչ մտքերու վրայ
պիտոր գտնես։

Բ. Խեղճ տղայ, այսչափ որոգայթներու
և այսքան հրապուրանքներու մէջ, որով
աշխարքը վրադ կը քալէ, ու սիրտդ զոր-
նալու և քեզի ընկճելու հետ է, ինչ կընես,
և ինչպէս պիտոր դիմանաս։ Ա.յո յուսա, մի
վախնար կըսեմ. դիր քեզի Ա.ստուծոյ ձեռ-
քը, սպասէ անոր այցելութեանն որ շատ
չուշանար. դիմէ Ա.ստուածածնայ ամենա-
զօրաւոր պաշտպանութեանը. մտածականը
և հոգևոր կարդացմունքը ձեռքէդ մի ձգեր.
ստէպ սուրբերուն եռանդագին հառաչանք-
ներ ըրէ, մանաւանդ անոնց վարքը. յիշէ վեր-
ջինքներդ, մի խաբուիր անցաւորէն, յաւի-
տենականին ուշ դիր։ Ա.ս ծեծը մինակ քու
դլխէդ չանցաւ, քանի քանի երիտասարդ-
ներ եւելօք խիստ փորձերուն մէջն իրենց
հոգւոյն պնդութեամբը դիտցան վրցընել
դիրենք և աշխարքիս ճակատներուն մէջ ա-
նանկ կորիճ ելան։

Բայց ձեզի դանք, ով հայրեր, որ զաւ-
կընիս կը սիրենք՝ ըսելով, մահաբեր դա-
նակը սրտերնուն խորունկը կը դալցընէք։

թէ և ըսենք որ Աստուծոյ շնորհքը մեծ մեծ բաներ կրնայ ընել, սեպենք թէ ասոնք անմեղութիւններն և սուրբ կոչումներն այսչափ վտանգներուն մէջ պիտոր ամուր պահեն կայնին. բայց թէ աշխարքիս ապականութենէն յաղթուելով՝ միանգամ մեղքին թունաւոր հեշտութեանը համն որ առնեն, ով հայրեր, որո՞ւն զլխուն կըսպառնայ հոգւոյն սրբոյ ան ահաւոր անէծքները՝ թէ անիծեալ ըլլաս զաւկիդ վրայ որ այսպիսի պիղծ հնարքներով Աստուծոյ ծառայութենէն մոլորցուցիր. ծաղկի վրայ մեռնի, կամ իր չարաչար վարմունքովը քեզի վիշտ ըլլալու և կեանքիդ օրերը լեղուցընելու կարճեցընելու համար միայն ապրի։ Բայց իմ միտքս փորձել էր, կըսես։ Սակայն զիտնաս որ ասոնք փորձ չեն, հապա փորձութիւն և մատնութիւն. անիկայ արդէն իր մէջն ունի բաւական փորձուելու բաներ՝ առանց նորէն զօրաւոր պատերազմողներ ալ զրդռելու աւելցընելու վրան. միթէ անոր սիրտը պղնձի՞ է մի։ Բայց ըսես պիտի որ անիկայ ճշմարիտ կոչում որ ունենար, պէտք էր աս ամէն ծեծին դիմանար։ Աղէկ է. բայց ըսէ ինծի, աստուածավախ ծնողքի մը իր զաւկին կոչու-

մը ճանչնալու խոհեմական ճամբան անս է, կամ թէ՝ իրեն առանձնական մարմնաւոր գործառնութեանց մէջ ան կեցրպ են իր բանեցուցած փորձերը։ Թէ կուգես որ զաւակդ աշխարքը թող չտուած՝ ճանչնայ ինչ ըլլալը, հասկըցուր իրեն ազգականեալ, խաբեբայ, մատնիչ մը ըլլալը. օգնէ անոր քուկին ընտանեկան օրինակներով և բարի խրատներովդ. պահէ զաւակդ աչքիդ լուսին պէս, զգուշացիր վրան ադամանդի պէս, ու անդիւտ պատուական մարգարտի նման հսկէ վրան։ Այսպէս ըրին և կընեն միշտ աստուածավախ և խոհեմ հայրերը՝ որ ըստ Աստուծոյ բարւոյն միայն փափաքելով, երջանիկ կընեն զիրենք ու զաւակնին։

Գ. Այս ամէն զգուշաւորութիւններն որ ինչուան հոս տեղ զուրցեցի, ծնողաց ազդարարութիւն ու տղոց զանազան հասակին տարբեր կացութեանը մէջ՝ի գործ դնելիք պարտաւորութիւններուն և հսկողութեանց վրայ՝ թէ անոնց հետ կենցաղավարելուն ինչ մոլութիւններէն պիտոր խորշին և որ ճամբաները բռնեն, բարի դաստիարակութեան խնամքը անարդիւն չհանելու, կը մնայ ինծի ընդհանրապէս քանի մը նախա-

պահեստ կանոններ ալ աւելցընել հոս, որ որդւոց դաստիարակութեան արուեստին մէջ ճշդիւ պահելիք միջոցներ են 'ի ծնողաց, թէ որ կուզեն տեսնել իրենց տանը ապագայ յառաջադիմութիւնը և դաւակացը որդւոց որդի երկան տարիներով երջանիկ վայելքը։

Նախ և առաջ դաստիարակութիւնն 'ի ծնողաց կը պահանջէ ճշմարիտ սէր մը՝ որ դաւակաց բարւոյն բաղձալ կու տայ, և մէկ անշահասէր նախանձ մը որ կը վառէ սըրտերնուն մէջ անոնց բարեկիրթ դիտուն ըլլալուն կերպը հոդալ ըստ ամենայնի, որպէս զի որդւոց միտքն ու հոդին մէյ մը առաքինութեան պատրաստուին։ Այս սէրը խնամող բնութենէն բեռնաւորած ծնողաց վրայ՝ կը պարտաւորէ անոնց բարւոյն վրայ զիշեր ցորեկ աչալուրջ հսկել, ևս և անոնց պակսութեանը, տկարութեանը երբեմն զիջանիլ չափազանց համբերութեամբ և սրտի ընդարձակութեամբ մը. և միանգամայն ինչպէս որ խստութիւնը և անգթութիւնը կարդիլէ անոնց, նոյնպէս ալ պէտք է որ կարդաւորէ չափազանց ներողամտութիւնը և աւելորդ փայփայանքը, որպէս զի չըլլայ թէ այնու չարաչար զեղծանելով որդիք՝ բա-

բոյն սահմանէն դուրս ելլելու առիթ ու-
նենան։

Երկրորդ դաստիարակութիւնը կը պա-
հանջէ ծնողքներէն մեծ խոհեմութիւն մը՝
որ որդւոց հետ կենցաղավարելու մէջ կը
սորվեցընէ անոնց ամէն բանին չափը, ժա-
մանակը՝ թէ ուր ըսելու են և ուր չէ, որը
լռելու են և որը խօսելու, երբ համբերելու
են և երբ չէխելու. վասն զի ամէն բանը
տեսնել և ամէնը ամէն անդամ ըսել՝ խո-
հեմութիւն չէ. անուշն ու լեղին, խրատն
ու յանդիմանութիւնը, վարձքն ու պատի-
ժը չափ և ատեն ունի. ամէն հասակը, ա-
մէն բնութիւնը, ամէն խառնուածքը մի և
նոյն դաստիարակութիւն չի տանիր, իրա-
քանչիւրոց առանձին կարգ և օրէնք սահ-
մանուած է՝ի բնութենէ. մէյմէկ տեսակ
կառավարութիւն ունի, տարբեր այլմէ, ո-
րոնք խոհեմութեան կանոնները լաւ կը սոր-
վեցընէ արթուն ծնողաց՝ թէ որ ճշդիւ գիտ-
նան բռնել զիրենք անոր սահմանաւոր մի-
ջին միջոցին մէջ, զգուշանալով միշտ յեր-
կուց ծայրից։

Երրորդ դաստիարակութիւնը կը պար-
տաւորէ ծնողքը՝ խրատելու որդիքը բանիւ
և գործով. խրատը ազդու և արդիւնաւոր

ըլլալու համար պէտք է որ խօսքը գործքին հետ ընթացակից ըլլայ, տեսականը գործնականաւ հաստատուի միշտ, խօսքով ըստուածը վարքին վրայ երևնայ, պարզ խրատ մը առանց օրինակի օգուտ չըներ։ Մոլի և խառնակեաց ծնողք մը ի՞նչպէս կրնայ որդւոյն աչքին յարգելի ընել առաքինութիւնը. հոգևորէն զաղջ և պաղ հայր մը ընտոր կրնայ տղան բարեպաշտական գործքերուն ջերմեռանդ ընել, երբոր կրսէ և ինքն ըսածը չըներ. այսպիսի խրատը փոխանակ շահելու՝ աւելի կորսընցընել կու տայ, և երես հանելով տղան՝ ապագայ ուղղութենէ ալ անյոյս կընէ։ Ապա ծնողական խրատը դաստիարակութեան կանոնաց մէջ՝ի հարկէ պէտք է որ բարի օրինակով ըլլայ։ Ահա այսպիսի խրատ միշտ կը պարտաւորին ծնողք տալ որդւոց՝ բարի և աստուածային պատուիրանաց ճամբուն մէջ պահելու դանոնք, կամ՝ տկարութեամբ և անհնազանդութեամբ անկէ որ մոլորին՝ նորէն դարձնելու հոն։ Ծնողք մը պէտք եղած ժամանակը տղան խրատելու՝ թէ որ անփոյթ և զանցառու կըլլայ, թէ որ անոր յանցանքներուն աչք կը զոցէ, չազդեր, չի յանդիմաններ, չի յորդորեր, անոր յանցաւորութեա-

նը մասնակից ըլլալով՝ վերջէն ալ պատաս-
խանատու պիտոր ըլլայ Աստուծոյ առջև։
Ուստի ինչպէս անոր աշխարք գալուն
պատճառ մը եղաւ, նոյնպէս ալ իբրև ա-
ռաջնորդ մը՝ աշխարքիս վրայ անոր ապրե-
լուն պէտք է որ իր խրատովն ու բարի օրի-
նակաւը լոյս քաշէ առջևէն, ինչուան որ ա-
նոր կենացը հետ բարի կեանք մըն ալ տա-
լով անոր՝ երջանիկ ընէ զանի ժամանակա-
ւորին և յաւիտենականութեան մէջ, ա-
ռաջ իբրև հարազատ որդի մը ծնողաց,
և ետքը ինչպէս բուն զաւակ մը արքայու-
թեան։ Երանի այսպիսի ծնողաց և այն-
պիսի որդւոց։

ԳԼՈՒԽ Դ.

Թէ բարեկիրթ պատանեան դպրոցէն հայրենի տունը դառնալուն՝ առջի անգամ մարդոց հետ կենցաղավարելուն մէջ ինչ ձամբայ պիտոր բռնէ, և որ սենկարգութիւններէն զգուշանայ պիտի :

Ինչուան հոս ըսածներուս ամէնը աղղաբարութիւններ էին ծնողաց՝ զաւկընին դըպրոցէն տուն դարձընելնուն պահելիք ըզգուշութիւններուն վրայօք, իրենց կողմանէ արդելք չըլլալուն տղուն բարի դաստիարակութեանը ապաղայ օգուտներուն. բայց ասկից անդին զուրցելիքներուս ամէնը ուղղուած է միայն՝ դպրոցէն ելլող նորակիրթ պատանեկաց խումբին, աշխարհիս մէջ տեսնուածին՝ իրենց կողմանէ 'ի գործ դնելիք զգուշութեանց վրայօք, դպրոցին մէջն առած դաստիարակութեանը բարի պտուղն աղէկ պահելու և արդիւնաբերելու. որով թէ իրենց առանձին և թէ առ հասարակ ի-

բենց ընտանեացը և հայրենեաց երջանկու-
թեանը պատճառ ըլլան։

Ա. Ուսումնական տարիները դպրոցա-
կան կարգաւոր դաստիարակութեամբ մը
արդէն լրացած է. տղան որ անկիրթ, տը-
ղէտ և մարդավարութեան հազիւ թէ նա-
խագաղափարը վրան՝ դպրոց մտեր էր, հի-
մա արդէն չափահաս պատանեակ մը, կըր-
թեալ, զգօն, գիտնականութեան ճաշակին
ըստ բաւականին ծանօթ, քաղաքականու-
թեան կանոններուն քիչէն շատէն հմուտ,
աշխարքին դարերուն և մարդկային կենացը
զանազան փոփոխութեանց տեղեակ, ինչ-
պէս մէկ նորատունկ ճիթենի մը իր ցան-
կապատէն դուրս կը հանուի փոխադրուե-
լու աշխարքին դաշտին մէջ, իր մշատև
կանանչովը զուարթ ընելու հայրենիքը և
արդիւնաւոր պտղովը վայելել տալու դեր-
դաստանին։ Ահա խնամոտ և անխոնջելի
կրթիչները, որ այնչափ ժամանակ դպրոցին
մէջն իրենց արթուն աչքին ներքև ու հա-
նապազօրեայ աշխատաւոր բազկացը հովա-
նաւորութեան տակը առաքինութեան մա-
քուր կաթը և բարոյականութեան կենսա-
կան սնունդը ջամբեր էին, ընելով զանի
բարեկիրթ պատանի մը, տղուն ձեռքէն

բռնած՝ հօրը ձեռքը կը յանձնեն. երանի թէ միշտ այնպէս մնար։ Հայրը անոնց իր պարտուպատշաճ շնորհակալութիւնը փոխարինելէն վերջը, տղան ինչպէս միամիտ զառնուկ մը ետեւէն ձգելով, կառնէ կը բերէ տունը. մայրը այնքան տարիներով կաթողին իր սիրուն զաւակը տեսնելու, մայրենի բաղուկը բացած կըսպասէ զրկախառն ընդունելու որդին. ընտանի բարեկամք ուրախ զուարթ խումբ մը եղած տունը ժողվուեր են՝ մարդասէր ընդունելութիւն մը ընելու նորեկին. բոլոր տունը կը խնտայ կը թնդայ տղուն վրայ՝ հեռատես ըլլալով անոր ապագայ պայծառութեանը. աղգայինք և օտարք ամէնը մտադիր և ակնկառոյց են՝ թէ աս տղան ինչ պիտոր ըլլայ։

Իրաւ է որ անիկայ իր պատանեկութեան աս տարիներուն մէջ երիտասարդութեան ծաղիկը բանալու վրայ՝ որ դպրոցէն առաջին անգամ աշխարհիս երեսը կելլէ իր առաքինութեան ու զիտնականութեան փորձերը տալու, թէ որ ուսումնարանին մէջ ինտոր որ պէտք է իր ժամանակները ուսման և կրթութեան անցուցեր է. արդէն պէտք է որ սորված ըլլայ բնական բարոյականութեան սկզբունքները, քաղաքակա-

նութեան հիմնական կանոնները. զիտէ յարգել հաւատքը, կրօնքը, բարեպաշտութիւնը. սիրել զԱստուած ամէնէն աւելի, և ընկերներն իր անձին պէս. պատուել իւր ծնողքը պատրաստական և հաւատարիմ հնազանդութեամբ և պատկառանօք. իր անձնական շահէն մեծ համարել հասարակաց օգուտը. զովել առաքինութիւնը և ատել զմոլութիւնը. նաև մէյմէկ քիչ չափաւոր տեղեկութիւն ունի աշխարհագրական զիտութեանց, բնաւորութեան ազգաց, դաստիարակութեան կրօնից, ծիսից և սովորութեանց, հին և նոր անցից անցելոց, և միանգամայն ասոնց հետ՝ թէ մարդոց մէջ ինչպէս պէտք է կենցաղավարիլ, մտնել ելլել, իրաքանչիւրոց կարգը, աստիճանը, հասակը պատուելով պահելով՝ քաղաքավարութեան և խոհեմութեան կանոնաց համաձայն։ Ահա դպրոցէն նոր ելած պատանին աս ամէնուն փոքր՝ի չատէ հմտութիւն ունի։ Բայց տեսնենք թէ փորձին մէջ ինչպէս պիտոր ելլէ. արդեօք իր տեսականը գործնականովն ընտիր պիտի ելլէ՞. երանի թէ անանկ ըլլար, և ամէնուն ակնկալութիւնը պարապ չհանէր։

Բայց ո՞ւր է անանկ ազնուական բարե-

կիրթ պատանի, որ զպրոցին մէջն ստացած դաստիարակութիւնը դուրս ելլելուն պէս պահէ, և երթալով եւելցընէ և կատարելագործէ։ Այս գեղեցիկ բնաւորութիւններուն բարեմասնութիւններուն՝ որոնց մէջ սնած և մեծցած տեսար հիմա մեր պատանին, պահեկէ մը շատէն քիչը կամ բնաւ և ոչ մէկը պիտոր տեսնես վրան, ամէնը իբրև հաղուստ մը՝ նորութիւնը կորսընցուցած, մօտայէն ընկած, վրայէն պիտոր հանէ նետէ. և այսպէս ան քու մեծ մեծ ակնկալութիւններդ պարապ պիտի հանէ։ Վասն զի ահա աչքիդ առջևէն դիմակով մը պիտոր անցընեմ կարգ կարգ պատանիներ՝ երևելի երևելի զպրոցներուն մէջ և անուանի վարպետներուն ձեռքին տակը կրթուած. որը շատ, որը քիչ, հետզհետէ կերպ կերպ անկարգութիւններուն մէջ մէկէն առջի բերան բռնուած, և վերջէն ևս գուցէ մեծամեծ մոլութեանց և չար սովորութեանց ևս նպատակ ըլլալով։

Բայց որովհետև իմին նորակիրթ պատանիս ալ, որուն վրայ յոյս ունիմ մարդ ըլլալուն, որ հիմա զպրոցէն նոր ելած՝ աշխարքը ոտք կը դնէ, չըլլայ թէ հիմակու որոդայթալից աշխարքիս մէջ ինք իր զլխուն

առանց առաջնորդի մնալով՝ վերջէն ա-
սանկներէն մէկն ըլլայ և իմ յոյսս պարապ
հանէ, ուստի պէտք է որ առջի բերան ա-
մէնէն աւելի անոր առջի քայլափոխներուն
ճիշդ դիտողութիւն և մտադրութիւն ընեմ,
ու ժամանակ մը՝ ինչուան որ առաքինու-
թեան մէջ լաւ մը հաստատուի, ձեռքէն
բռնած, չթողնեմ ամենևին։ Վասն զի
մարդս քանի որ աշխարքիս մէջն է, առաջ-
նորդի մը միշտ կը կարօտի. կրթութիւնը
ամէն ատեն հարկաւոր է, առանց կարգի
կանոնի բան մը առաջ չերթար. մարդը զա-
նազան տկարութեանց և սխալմանց ընդու-
նակ ըլլալով՝ ուրիշներուն օրինակովը կը
խրատի և կը սորվի զգուշանալ։ Ուստի հի-
մակու ժամանակիս երիտասարդաց վար-
քը վարմունքը հոստեղ դատի կանչելով և
անոնց գերի եղած տեսակ տեսակ ցոփու-
թիւնները, մոլութիւններն ու նորաձևու-
թիւններն երես տալով և երևան հանելով,
հակառակէն կը սորվեցընեմ և կը համո-
զեմ նորակիրթ պատանիս՝ թէ որ բաներէն
պիտոր ետ կենայ, և ինչ խոհեմական և
զգուշաւոր ճամբաներ պիտի բռնէ աշխարք-
քիս որոգայթներուն և վտանգներուն մէջ՝
որոնց ամէն իժիր կրնայ պատահիլ։

Բ. Բարեկիրթ պատանի մը առջի անգամ՝ ընտանեաց մէջ մտնելուն՝ այնպէս մը պիտի կենցաղավարի՝ անուշ, հեզ, համեստ ու աղնուական կերպով մը, որ ամէնուն սիրոյն և գովասանքին արժանանայ։ Կան խէլ մը պատանիներ որ հօրերնուն տունը մտնելուն՝ առջի բերան ապշածի պէս մը կը մնան ու նոր վանդակը մտած թռչուններու նման կը մոռնան խօսելը. և որովհետև դպրոցներուն մէջ ամէն տեսածնին մեծ ու ընդարձակ է, իրենց տունը թէև աղնուական՝ կրսկսի պզտիկ երևնալ աչքերնուն, ա նոր համար բանի մը չեն հաւնիր, ու սրբութեամբ մը աս բանը ան բանը երես կու տան։ Այնպէս դպրոցը շարժման կեանքի մը սորված ըլլալով՝ տնական խաղաղութիւնը ձանձրութիւն կը բերէ, կրթութեան առանձնութեանը մտածի պէս կու գայ իրենց։ Ոմանք ասոնց հակառակ, տուն մտնելուն պէս՝ մէկէն ասդին անդին կըդպաքները կը խառնեն, դարանները կը բանան, սանդուղներէն արագ արագ կելլեն կիջնան, մէկ խցէն մէկալը, վերնայարկէն խոհանոցը, սրահէն պարտէզը, կը վազեն վեր վար ճեմելիքը ծառաներուն վիշտ տալու, հանդերձարանները կը խառնեն, տու-

նը տակնուվրայ կընեն, կարծես որ դա-
տաւորին մարդիկները տուն կոխեր բան
կը փնտրեն։

Ասանկ ալ ցեղ մը պատանիներ դպրոցին
մէջը քաղաքավարական ու ազնուական
կերպերը սորվիլ չուզելով, վերջէն կամըչ-
նան ազնուական տղոց մէջ խառնուիլ, որ
չըլլայ թէ կոպտութիւններն անոնց աչքին
դարնէ. անոր համար ցածազգի մարդոց
հետ կը սիրեն նստիլ ելլել, որպէս զի ա-
զատ ապրին իրենց եպերելի սովորութեան-
ցը մէջ։ Բայց թէ որչափ կը սխալին ա-
սանկները յայտնի է. վասն զի վարի մար-
դոց հետ նստիլ ելլելը կրնայ շատ կործան-
մունքներ պատճառել, անառակ և մոլի
մարդոց ձեռքը՝ խաղի արբեցութեան և կա-
տակի վարժելու վտանգին մէջ ըլլալով, որ
համեստ և պատուելի կեանքէն կը շեղեն
կը խանգարեն գովելի բնաւորութիւնները,
և առաքինի կրթութիւններէն քիչ քիչ կը
թուլացընեն։

Նոյնպէս ան պատանիներն որ դպրոցին
մէջը չափաւոր ու ժուժկալ վարժեր էին,
հօրերնուն սեղանը համով փափուկ կերա-
կուրներ դանելով, մէկէն բաղէի պէս ա-
նոնց վրայ կիյնան. ծաղր կընեն ան բնա-

կան խոշոր կերակուրներն որ հոն տեղ այն-
չափ տարի վայելեցին. բոլոր օրն ուտելիքի
վրայ կը խօսին, խոհակերանոցէն ասդին
չեն դար. և այսպէս քիչ ժամանակին մէջ
կըլլան շատակեր և պորտաբոյծ։ Եւ ահա
անոր հետևանքն ալ. չափազանց խճողե-
լէն և ուելորդ կերակուրներուն չոգիներէն
թմրած անճըրկած՝ քունը զլուխը նետել
զինքը մահճի մը վրայ կամ բազմոցի վրայ
երկնցած յօրանջել. կամ մութը կոխելուն
պէս՝ տնէն դուրս վազել սուրճի խանութ-
ները, ռօմներ, զօրաւոր փօնճեր տնկել՝
կերածը մարսելու. կը թողում ուրիշ ծանր
ծանր անկարդութիւններն որկրամոլու-
թենէն առաջ եկած՝ բարի վարուց ապա-
կանիչ։

Ասանկ և ասոնց նման անվայել վար-
մունքներ բարեկիրթ ազնուական պատա-
նիի մը մեծ ամօթ բաներ են, որ շուտով
քանի ստրկի ու խելաց տէր ըլլալը կը ցոյ-
նէ. վասն զի անիկայ առաջին անգամ ըն-
տանեաց հետ խառնուելուն՝ այնպէս պիտի
չարժի ուտելուն խմելուն, նստելուն ելլե-
լուն մէջ, որ խելացի մարդոց իմացընէ թէ
ինքը մենծ մարդ մըն է և վերջէն շատ բա-
րեկաւութեանց յոյս կու տայ։

Գ. Կրթութիւն առնող պատանեաց մէջ հապիւ տեսնուած են անանկներն որ ուսումնարանէն ելլելէն ետքը՝ չքաշուին երբեմն երբեմն իրենց հին վարպետներուն տեսութիւն ընելէն, անուշութեամբ անկաճ դնելով և սիրով ընդունելով անոնց հայրական խրատները և ազդարարութիւնները. վասն զի շատերը զուրկ այսպիսի ազնուական սրտէ՝ անգամ մը հոնկէց դուրս ելլելէն վերջը, մէյմըն ալ երեսը չեն դառնար նայիլ, մտուընին ալ չեն ուզեր բերել ան աշխատանքն ու քրտնաջան խնամքը, որ բարեպաշտ կրթիչներէն տեսեր էին։ Այս հերիք չէ. այլ կրցածնին չափ զէշ ալ կը խօսին. խել մը անհաւատալի դիզաբանութիւններ, մեղադրութիւններ, զրպարտութիւններ ցանելով ծանօթից մէջ. և այսպէս համբուրելու տեղ՝ կը խածնեն ան ձեռքն որ սնուցեր ու շոյեր էր զիրենք։ Թէ որ ճամբան անոնցմէ մէկուն պատահելու ըլլան, երեսնին կը պահեն անանկացեալ պարտքականներուն պէս. կամ թէ փախչել չկրնան, թէ որ տեսնող մը չըլլայ՝ սանկ զլուխ մը ծռելով մէկէն կառնեն կը քալեն. բայց թէ հասակակիցներուն մէկը հոն աչքերնուն դպչի, վախերնուն՝ որ պզտիկ չկրնան անոր

առջին՝ չտեսածի զալով կըսկսին վեր վար ասլշած մը նայիլ խանութներուն զարդերուն, կամ վերնագիրները և հրապարակական ծանուցմունքները կարդալ։ Զարմանալի բան. ինչ չուտ մարդկային ակնածութենէն յաղթուած, վատերուն բերանը չկենալու նկատմունքով՝ ամօթ սեպել համեստ քաղաքավար ապրիլը։

Այս կարգ խելացնորներէն են անոնք ալ, որ ընկերակիցներուն կատակէն ազատելու համար զժուարնին կերթայ դաստիարակի կամ հաւատարիմ ծառայի մը հետ ընկերանալը. հօրերնուն գլուխը կը ճանճրացընեն, որպէս զի թող տայ իրենց մինակ դուրս ելլել։ Հայրերնին թէ որ մտիկ չընէ, իրենց զօրաւոր պատճառներն աս է. հայր, ալ հիմա տղայ չեմ որ ձեռքէս բռնելու կարօտութիւն ունենամ, արդէն տասնըութը տարիս կոխեցի, զիտեմ ինքիրենս քալել. տես աս ան աղնուականին տղան ալ մինակ դուրս կելլէ. մի վախնար, ես զպրոցին մէջ աղէկ կրթութիւն առեր եմ, կարդացեր խմացեր եմ ամբարիշտ փիլիսոփայից սխալանքները, անոնց ծուռումուռ սկզբունքները բնաւ մտքիս մէջ տեղ չէ ըրած, վստահ եղիր, բաւական ճանչցեր եմ աշ-

խաղքը. թող տուր ինձի առանձին գըլ-
խաւս դուրս ելլել։ Խեղճ, դեռ ուրչափ միա-
միտ ես. թէ որ դուն կը ճանչնաս աշխար-
քը, աւելի կը ճանչնան ան վարպետորդի-
ներն որ մինաւոր կուզեն գտնել քեզի՝ այն-
պիսի դաս մը տալու, որ դեռ չես առած.
հայրդ որ քեզմէ աւելի փորձ է, թող որ քիչ
մը ատեն ալ զգուշանայ վրադ։ Ու երբոր
ատենը գայ մինակ երթալու, չըլլայ որ մէ-
կու մը հետ առանց դիտութեան համարձակ
ընկերութիւն ընես. աշակերտակիցներուն
մէջէն աւելի խելացին ընտրէ, մի անխտիր
բարեկամանար մէկուն մէկալին հետ. մի
վստահիր ամենուն՝ որ քեզի հետ միատեղ
կրթութիւն առին, որովհետեւ ճշմարիտ բա-
րիները քիչ են։ Կարճ կապելու համար՝ թէ
որ ազէկութիւնդ կուզես՝ անմեղութեան
գանձդ երկան ատեն պահել, Աստուծոյ
աչքին միշտ սիրելի ըլլալ, առանց վտանգի
երիտասարդութիւնդ անցընել, պզտիկուց
առած կրթութիւններդ պահել և խելացի
մարդոց աչքը մտնել, նայէ որ առջի բերան
խիստ մեծ զգուշաւորութեամբ առջի քայ-
լերդ ընես աս լաբիրինթոս աշխարքիս
մէջը։

ԳԼՈՒԽ Ե.

Թէ բարեկիրթ պատանեաց աշխարհքիս նորաձև հոբիւններուն և սովորութիւններուն մէջ ինչ նպաստակ շարժի, և որ ուսայնութիւններուն առ պիտի կենայ :

Ա. Հիմակուան դարուն հոգին ամէն ազնուական սովորութիւններուն ու մարդավարական շարժմունքներուն մէջ նորաձև փոփոխութիւններ մտուցեր է, որուն ռամիկը ազատութեան անուն կու տայ. վասն զի համեստ կենցաղավարիկը, չէնքով շնորքով խօսիկը, յարգութեամբ քաղաքավարութեամբ վարուիկը՝ հին անխելքութիւն կը կանչեն : Տես, կըսեն, սա մեր նախնիքներուն անհամութիւնն որ ամէն բանը մանր կը մաղէին. հիմակ մարդավարական արարողութեանց ալ ժամանակը չէ. մարդս ազատ էակ մը նէ, ինչ խելք է ինքը զինքը կապել, ինչպէս որ կուզէին ընել դպրոցներուն հին վարպետները՝ բոլոր օրը տղոց հին ծթուած սովորութիւններ

սորվեցընելով։ Ցէր, պարոն, ուրիշ խէլ մը պատուանուններ ու մեծարանաց բառերը՝ բոլորն ալ ճանձրութիւն պատճառող բաներ են. հիմակ մէկզմէկ տեսնելուն՝ ձեռք ձեռքի տալ մը սխմել մը, թև թևի անցընել, դուռ՝ քնզի ըսել, ահա հիմակու քաղաքավարնեբուն մէջ անցնող աղնուականութիւնը։ Ցուն մը բարևելու երթալ առանց երկու բառ գիտնալու, մինակ քանի մը կցկտուր մեծարանաց խօսքեր բերնին մէջ ծամծմելով, աթոռի մը վրայ նստիլ ծունկ ծնկան վրայ յենարանին թևը կոթընցուցած, գըլխանոցը անկիւն մը նետել կամ երկու ծընկան մէջ ճզմել, ճակատը շփշփել, մազերը ոլորել կոկել, երբեմն երբեմն ձեռքի եղած մտրակը ծնկան զարնել կամ դետինը քըսկռտել։ Բերաններին եկածը անանկ կոպտութեամբ դուրս կու տան որ համեստ մարդոց ամըչնալ կը բերէ. թող տուր իրենց քթի տակէ խօսուածքի կերպերը՝ ծխելիք բերանը։ Խելուրնին փչած ափեղցըփեղ բաներ ընելը մարդավարութիւն կը սեպեն, ընչու որ՝ հիմակու հիմա անցնողն ան է։ Ցես ահա այս անուն աղնուականին տըղան, որ ձիերն իրեն զուարճութիւն ըրած՝ ժուռ զալուն ինքը կը կառավարէ. երբեմն

դուրս կելլէ երկու բարձրապարանոց ձիով, աղէկ մը սանձած ճերմանիայի սո-
վորութեան փայլուն դուներովը, կը քշէ իր զեղեցիկ օդապարիկ նժոյգները, բաց
ճակատով ու դէպ 'ի մէկդին կախած մա-
զերով մը, ծխելիք բերանը՝ քաղքին բաղ-
մամարդ ճամբաներէն ծխելով կանցնի
կը դառնայ։ Ասոնք հիմակու ազատու-
թեան շնորհքներն են, ուր քիչ մը առաջ
յետին կառավարն ալ կամըշնար ձիրնթա-
ցին ճամբէն անցնիլ իր ծխաշունչ կառքո-
վը։ Առաջ աս մեր ձիաւոր երիտասարդ-
ները քաղքին մէջ ձիով պտըտելնուն՝ չէն-
քով շնորհքով հագուած հետերնին ծա-
ռայով մը կելլէին. հիմակ ամէն բանն ու-
րիշ կերպ, տան հագուստով, առանց փող-
պատի, որսորդի դաւազան մը ձեռքը։

Ափսո՜ս. աղնուական տղոցմէ որչափ կը
դտնուին աս զեղացի ձիաւորներուն նա-
խանձողներ. ալ զէշն ան է որ ասանկ
բիրտ անվայել վարմունքներուն մէջ նմա-
նելով անոնց՝ անպիտան մոլութեանց ալ
քիչ քիչ կը սորվին։ Ասանկ ազատասի-
բաց ինքնահաճոյ նորաձևութիւններուն զի-
բենք վարժելու տեղ, շատ լաւ կըլլար որ
քաղաքավարութեան կանոններուն վար-

ժութիւն ընէին, որ կը սորվեցընէ իր կարդին ու աստիճանին համաձայն կերպեր բռնել, ներսը դուրսը շարժելու և խօսելու ճամբան գիտնալ։

Բ. Պատանիներուն շատն ալ խելուընին մտուընին հագուելու կապուելու կու տան. ան սև պարկեշտ հագուստը, որ տարիներով գպրոցին մէջը հագան, անդամ մը վրաներնէն հանել նետելէն վերջը՝ որբեվարիներուն պէս երկանը մահին սուզէն ելլելուն՝ խիստ պայծառ զոյներու կը մտնեն, չեն կրնար ուղածնուն պէս փայլուն զունով չուխայ մը գտնել։ Վերարկուին ներսի դին կերպասը պէտք է՝ որ բաց կամ ծիրանեգոյն ըլլայ, լանջապանակը կարմիր նարընջենի, ճտին կապը կանանչ կամ նռան գունով, թաշկինակը բարակ մետաքսէ, շապիկը կցելու համար փայլուն գնդասեղներ, պզտիկ քանդակաւոր կոճակներ. ժամացոյցը ոսկի շղթայով կողմնակի կախած, ամէն բանը ըստ աւուր պատշաճի, ժամանակին մօտային բերելուն յարմար։ Ասանկ հագարումէկ գուներու տակը զանազան նոր ածեւութիւններով կերեցնէ զինքը ինչպէս սիրամարգի ճագ մը՝ որուն վրայ խելացիները գիտեն ինչ զուարճալի ծաղրածութիւններ ընելու է։

Նոյնպէս ասոնք մասնաւոր ախորժակ մը ալ ունին մաղերնուն, որ կատակի նիւթ մը է տեսնողաց. որը մաղերն երկու կիսել մը ունի ու դէպի անկեանին վրայ անձրև մը կը ձեացնէ, որը մէկ կողմը խոշոր ցոցունք մը կընէ, որը ետին խուզելով փունջ մը կը բերէ գլխուն վրայ որ ինչուան ճակատն աչուքները կիջնայ. որը անոր հակառակը ամէն դին մաղերը կը թողնէ ինչուան ուսը, արուեստով մը մէջէ մէջ ոլորած կլորած. ասոնցմով նորասէրներուն կարդէն կուզեն ցցընել գիրենք։

Բայց խելացի և կիրթ պատանին պէտք է ասանկ թեթեամտութիւններէն ետ կենայ, ապա թէ ոչ՝ բազմութեանը ծաղր ու ծանակ կըլլայ։ Հագուել սգուելը չէնք շընորհք ունի. նորաձեւութեանց մէջ միշտ իր հասակին ու աստիճանին վայելուչը նայելու է. ամէն բան ամէնուն համար չէ, ապա թէ ոչ՝ կրթեալ մարդ մը անկիրթէն ինչ տարբերութիւն կունենար. ծանրաբարոյ և խելացի մարդը շատ անգամ իր ձեւէն իր կերպէն յայտնի կըլլայ. ասկէ շատ բան կրնաս իմանալ։

Գ. Ա.յսպիսի նորասիրութեանց ետեւէն եղող ունայնասէր պատանեաց ճաշակը լաւ

մը հասկընալու համար, այցելութիւն մը ընէիք իրենց առանձնական խուցը՝ ուր որ տատուան գեղեցիկ ժամերը կանցընեն սա-զուելու զարդարուելու։ Խուցը մտնելուդ պէս՝ մէկէն անուշ բուրմունքներ մը երեսդ կը ծաւալի. ամէն բանը տեղնիտեղ շէնքով շնորհքով. մէկ կողմը խոշոր հայլի մը կա-խած ու ծանր սփռոցով զրասեղան մը դի-մացը, և վրան չեմ՝ գիտեր հազարումէկ մանտր մունտր գործիքներ՝ որոնց ամէն մէկը իրենց յատուկ պաշտօնն ունին. նայէ ուշ դիր, մէկիկ մէկիկ աչքէ անցուր ու տես թէ մարդկային մեղկութիւնը և ունայ-նասիրութիւնը ինչուան ուր հասեր է։

Դարձեալ տեսնելու բան է անոնց գիւա-նապահին սենեակը. զրասեղան մը ճար-տարարուեստ բարակ գործուած, և վրան ստուճ մը գեղեցիկ կաղամարով, ուրկէց փափուկ խմաստներ և ազնուական մտա-ծութիւններ միայն կելլեն. աւազամանը ոս-կի փոշիէ կապուտով խառնած, որ ատա-ղաղից երկընքի նմանութիւն կը բերէ. կընք-քելու նշխարքը գոյնզգոյն և զանազան գը-բոշմածներով, և բարեկամական գեղեցիկ խմաստներով. կնքամոմը տեսակ տեսակ, բարակ ու փայլուն, կնիքները մէյ մէկ ձև,

կերպ կերպ վայելչագրութիւններով, գրեթացի խրթնագրերով, պսակաձև նկարներով, արծուանշաններով, ասպետական խաչերով, զարդարուն վերջաւորներով, որոնց ամէն մէկը նամակին նայելով գործածելու տեղ ունի, ուր մտերմութեանը և ուր յարգութեան և ուր ցաւակցութեանը։ Այնպէս և խէլ մը ընտրութիւններ ունին թղթերուն տեսակին. հասարակ թղթի վրայ նամակ գրելը մենծ ամօթ է, հապա պէտք է որ ազնիւ ընտիր ըլլայ, հեռաւոր տեղերէն եկած. այսօր մէկ տեսակ թուղթ մը, վաղը ուրիշ ձև ուրիշ գոյն, մէկալ օրը մէկ ուրիշ նորելիք թուղթ մը։

Կանացի՛ մեղկութիւններ բոլոր բովանդակ, և վեհանձն պատանուց մը մեծապէս զզուշանալի ասանկ աւելորդ նորասիրութիւնները։ Վասն զի անկարելի է ասանկ զրգանաց և փափկութեանց մէջ ազնուական մտածմունքներ սնուցանել, բարձր ուսումներու մէջ առաջ եթալ, հայրենեաց օգտակար ըլլալ, և մանաւանդ որ աւելի հարկաւորը՝ սրբութեամբ վարուց սրտին անմեղութիւնն ու հաւատքին ամբծութիւնը պահել։

ԳԼՈՒԽ Զ.

Թէ բարեկիրթ պատանին ինչպէս իր կեանքին զբաղմունքները կարգի դնելու է, և որ մոլի սովորութիւններէն զինքը զգուշացընելու :

Ա. Բարեկիրթ պատանի մը ամէնէն առաջ պէտք է որ իր կեանքին երեսէն գործքերը և օրական զբաղանացը գլխաւորները հաստատուն կարգի կանոնի մը դնէ, որպէս զի հետզհետէ փոփոխութենէ օգուտ և անուշութիւն մը քաղէ : Բարեկարգ և հանդարտաբարոյ հոգին մենծ մենծ գործքերու ընդունակ է. այնպիսի մարդը երեսէի վաստակներ կը հանէ ժամանակէն, դիպուածէն, պարագայէն. բան մը աչքէն չի փախցըներ, բանի մը անփոյթ չըլլար, գործ մը կիսկատար չի թողներ. բայց ընդհակառակն ծուլութենէ յաղթուողին կեանքին օրերն անդործ անպտուղ կանցնին, ուստի պէտք է փախչիլ ծուլութենէն ինչպէս առաքինութեան գլխաւոր թշնամիէ մը : Դպրոցէն

ելլելուն՝ իւրաքանչիւր պատանի իրեն մեն-
ծին և առաջնորդին խորհրդակցութեամբը
անանկ կեանքի և գործքի մը պիտի դբա-
ղեցընէ զինքը, որուն որ յօժարութիւն և
յարմարութիւն ունի. ուրչափ երիտասարդ-
ներ քսան տարին կոխած, ինչ կեանքի և
աշխատութեան յօժարութիւն ունենալնին
դեռ չեն գիտեր, և հարցընողին կը չփոթին
ինչ պատասխան տալու. ամՏ բան։

Ա.հա կը տեսնենք աշխարքիս բազմամ-
բոխ մարդոց մէջ զանազան գործառնու-
թիւններ, զանազան արուեստներ, նայիս ո-
րը մեքենական ձեռագործներու զբաղմանց
տուեր է զինքը, որը ազատական արհեստ-
ներու բաղձանք ձգեր է, որը կախորժէ հին
կամ նոր լեզուներու ուսմունքը. ոմանք
հնութեանց ետևէ են, և ոմանք առուտուրի
և վաճառականութեան. մէկին ախորժելի
կու գայ գրքերուն թարթափելով ճամբայ
ընել, մէկալին՝ կառքով կամ շոգենաւով
թափառելով. կէս մը աշխարհագրական
ընդարձակ ուսման զբաղած՝ կը սիրեն հե-
ռաւոր ժողովուրդներուն մօտենալ և ազ-
գաց թագաւորութեանց և սովորութեանց
սկզբնաւորութիւնը տեղեկանալ, կէս մըն
ալ քաղաքական և ատենական օրինաց զի-

տութեան ետեւէ են. կան ալ որ, թէ և քիչ որ, որ կախորժեն տանուտիրական գործառնութիւնները, ուղելով կը թարթափին հօրերնուն դիւանը, տնտեսին, զրագրին, վարձկաններուն հետ կառնեն կու տան. մենծ զուարճութիւն կը համարին անդաստանական կեանքը. ախորժով կը զբաղին այգեբաղին, հնձանաց, արտերուն, մշակութեան, ջերմին և այլն։ Ասոնց ամէնն ալ մէյմէկ իրենք իրենց զեղեցիկ և արդիւնաւոր զբաղմունքներ են մարդկային կենաց, քաջայարմար երիտասարդական հասակին, ու մենծ շահ և անթիւ հարստութիւններ կը դիզեն մարդուն։ Բայց միանգամայն ալ թէ որ այսպիսի գործքերու մէջ խելքով և ընտրութեամբ, չափով և կարգով չվարուին, մեծամեծ վնասներ ալ կրնան պատճառել պատուոյ, ընչից, առողջութեան, բարի վարուց և համբաւոյ։

Ուստի խելացի պատանիի մը պէտք է որ 'ի հարկէ այսպիսի իրաց մէջ խելացիներուն խորհրդով շարժի, ոտք ոտք առաջերթայ, խելքի փչածին չհետեւի, չգիտցած գործքին ձեռք չնետէ։ Եւ այսպէս յարմար և օգտակար վիճակ մը ընտրելէն վերջը, ամէն մտադրութիւնը հոն ուղղէ, և անոր

մէջ երևելի և նշանաւոր ըլլալու փոյթ ունենայ, լաւ հմուտ ըլլալով նոյն արհեստին գանազան փորձերով. զիտնա որ մի և նոյն գործքի և գրաղման մէջ խելացի կառավարութեամբ շատ գերդաստաններ չէնցան, և իր գործքին ինչպէս որ պէտք է գլուխ կայնիլը չգիտնալով շատ ալ տներ փլան։

Բ. Ինչպէս որ գործունէութիւնն ու աշխատասիրութիւնը երևելի գլուխ մը կը սեպուի գրամոց, նոյնպէս գործատեցութիւնն ու դատարկասիրութիւնը մենծ դուռ մը կը բանայ անանկութեան և աղքատութեան։ Վասն զի դատարկութենէն առաջ եկած մէկ շատ վնասներէն մէկն ալ՝ խաղի մոլութիւնն է, որ վերջին կործանումը կը բերէ մարդուն գլուխը. և ասոր ալ սորվիլը բան մը ըսել չէ, որովհետև ստէպ դատարկապորտներուն մէջը գտնուելով գործատեաց պատանին, քիչ ատենին մէջ խաղի տեսնող ըլլալէն, կանցնի խաղցողներուն կարգը. Եռեկն նստողները վարպետորդի ըլլալով՝ առջի բերան կը կեղծեն որ անոր պէս նշանաւոր խաղցողի մը գիմացը նըստելու սիրտ չեն ըներ, ու ամէն անգամին կը կանչեն, բարէ, բարեկամ, խօսք չուզեր, դուն վարպետ ես, ով կրնայ քու դէմդ ել-

լել։ Պատանին աս խօսքերէն բռնուելով՝ կը կըլլէ կարթը. առջի անգամներուն իրաւ կը կթէ զանոնք, բայց վերջէն անոնք խօսքը մէկ ընելով այնպէս կը պատրաստուին որ ինչուան ոսկորներուն ծուծն ալ կը ծծեն կը քաշեն կառնեն անկէ։ Շատերն անանկ եղան որ ունեցածնին ամէնը տալէն ետքը՝ պարտաւորեցան հաղուստնին ալ հանել տալ, անանկ որ ձմեռուան մէջ առանց վերարկուի կիսամերկ մնալու ալ հարկադրեցան։ Ինչեր կուզես որ ըսեմ քեզի. որը ծանր վաշխով ստակ կառնէ, որը հաղուստը գլխանոցը կթողին քովն երաշխի կը դնէ, որն ալ ձեռք կը զարնէ գողութեան, գանելի և չարաչար վարմունքներու։ Հապա ուր թողնենք ժամանակին կորուստը, ամէն տեսակ անզգամութեան չար օրինակը՝, անէծքը, հայհոյանքը, ստերդմնութիւնը, արբեցութիւնը, բարկութիւնը, յուսահատութիւնը և կատաղութիւնը։ Բոլորն ալ աղնուական պատանիի մը անվայել, և բարեկիրթ տղու մը փախչելու բաներ։

Ձեմ ըսեր որ խաղը միշտ զէշ բան է, այլ կրնայ երբեմն անմեղ զուարճութիւն և ափոփանք մը սեպուիլ աշխատեալ բնութեան. մարդս երբեմն երբեմն իր օրը ա-

նուշ անցընելու և դինքն աւելորդ և անօգուտ մտմտուքներու բեռներէն թեթեցընելու համար՝ խաղի մը դրադիլը դէշ չէ. բայց ամէն բանը չափ սահման և ժամանակ ունի. ամէն խաղը խաղալու չէ, կայ անմեղը և օրինաւորը, կայ և ապօրինաւորը և մեղանչականը։ Այնպէս խաղալուն մէջ պահելիք թէութիւն կան. խաղին վախճանը զուարճութիւն ըլլալով՝ շահը գուրս կը հանէ. պարապ ատենն աղէկ բանի մը ծախելու սահմանուած ըլլալով՝ կարգիլէ դէշ սովորութեամբ անոր դերի ըլլալը։ Առևտրական գործքերը երեսի վրայ ձգել, և առաւօտուն կանուխ գալ նստել նարտին կամ թղթին սեղանին գլուխը՝ խաղին մոլի եղողի գործք է, որ իր կործանումը խաղին վաստակին հետ և կթելուն մէջ կը գտնէ։ Աստանկ ալ պէտք է միշտ իր կարգին և ատիճանին յարմար խաղացողի մը դիմացը նստել։

Գ. Անգործութեան և դատարկութեան մէկ գործքն ալ որսորդութիւնն է, որ պարտուպատշաճ վայելչութեամբ 'ի գործ գըրուելուն՝ գովելի կրթութիւն մը կը սեպուի երիտասարդական կտրիճ հասակին. բայց խէլ մը անգործ և անկիրթ պատանեկաց

համար զինուորական ասպատակութիւն մը եղեր է։ Նայիս երիտասարդաց խումբ մը խառն ամենայն ազգէ. ամէնը մէյմէկ բանի տէր, գործքի գլուխ, ամէն բանն երեսի վը-բայ ճղած, տեսնես ոստերով հիւսած սայլի մը վրայ իրեք չորս հոգի մէյմէկ նստարանի գլուխ անցած, երկբերան հրացան սրունք-ներնուն մէջ տեղը, որսական և նապատակ բռնող շներով, առտուանց կանուխ վաղ-ցընելով կելլեն քաղքէն փոշիի մրրկով ու ծխելիքի ծխով. ազնուական մարդու նշան մը ամենեին չերևնար վրանին. մէկ յարդէ հաստ գլխանոց մը, խոշոր կապով թաշկի-նակ մը ճտերնին, սրիկայի բաճկոն մը կոճակաւոր, մախաղ խոտորնակի կախած, երկան կոշիկներ սրունքէն վեր, կարծես որ հեռաւոր աշխարքները ճամբայ ընելու ե-լեր են։ Ամանկ հանդիսով մը գաշտը հաս-նելնուն, հոս ալ խել մը բիրտ գեղացի մար-գիկներ հետերնին առնելով, պատուաւոր բազմութեամբ մը, հոս հոն ցիրուցան կել-լեն արտերուն, անտառներուն, ճահիճնե-րուն։ Ինչուան իրիկուն եղած չեղածն ի-բենց թողնենք. բայց իրիկուան ժամուն ամէնը մէկտեղ ժողվելնուն՝ տեսնելու բան է ասոնց պանդոկի կամ զինետան մը մէջ

կերուխումն ու գինովնալը և խառնաձայն աղաղակը. որսի հրացանները մէկ անկիւն ձգած, վառօղի ամաններն ուրիշ անկիւն մը, անդին որսի շներ, ասդին ծառաներ, չորս կողմը երկայնասրունք պարոններ են նստեր, աթոռներն երկու ոտքի վրայ դէպ 'ի ետև ծռած, գլուխներն և գլխանոցներն տղմաշաղախ, ոտնամաններն ինչուան կըրունկը փառաւորապէս տղմով պլըշտըկած. մէկը կերդէ, մէկը կը պօռայ, ուրիշ մէկն ալ գլուխը պնակին մէջը խոթած, լափըռտելու հետ է։ Վայ խեղճ տեսարան. լսողին զանելը կու գայ, և իրենք ատանկ կոպտատարաղ խելացնորութիւնները զուարճութիւն են դարձուցեր իրենց։

Համեստ պատանի, չըլլայ որ այսպիսի ռամկական բաներով անպատուես գրեզ, որ փոխանակ ազնուական պատուոյ անունց՝ ցած և վատահամբաւ անուններու արժանի ըլլաս։ Թէ որ որսորդութիւնը կը սիրես, ես ալ կը գովեմ, գեղեցիկ զուարճալի կրթութիւն մի է, բայց օր և ժամանակ ունի՝ երբոր գործքերդ գլաղմունքդ ազատ ես. միանգամայն պէտք է մինաւոր կամ ընտանի բարեկամաց խումբի մը ընկերութեամբ երթալ ու մթուն չմնալ. ծնողաց

հաճոյական է իրիկուան զէմ իրենց տես-
նուիլը։ Որսի երթալուց՝ այնպէս հագուէ
կապուէ որ ազնուական ըլլալդ ճանչցուի.
ասիկայ մեծ պատիւ կը դառնայ քեզի, որ-
չափ որ չէիր կարծեր։

ԳԼՈՒԽ Է.

*Թէ բարեկիրթ պատանին աշխարքիս վտանգ-
ներուն մէջ ինչ զգուշութիւններ պիտոր ըլլա,
և ինչ ձամբով պաշտպանէ պիտի զիրքը։*

Ա. Թէ որ ընդհանրապէս կը մտածուի
թէ աշխարքիս մէջ հիմակու դարուն երի-
տասարդաց բարքն ապականող բաները ո-
րոնք են, գլխաւորապէս քանի մը վտանգ-
ներ կան որ պատճառ կըլլան, այսինքն է
անզգամ մարդոց ջանքը՝ երիտասարդաց
սրտին մէջ հաւատքին եռանդը մարելու,
մարդկային նկատմունքը, ամբարիշտ զրոց
կարդացմունքը. ասոնցմով անզգոյշ պա-
տանին կը բռնուի որոգայթը, ուրկէց դիւ-

ին չըլլար զինքը փրցընել՝ թէ որ զինքը պաշտպանելու կերպը չգիտնայ։

Ա.ոջի վտանգին վրայ խօսելով՝ կը զրա-նուին անանկ անզգամ մարդիկ որ պատա-նին դպրոցէն ելլելուն պէս՝ որոգայթաւոր լարերով կառնեն կը պատեն չորս կողմը, և այնպիսի շոյելով շահելով կը վարուին հետն որ խեղճը մեծ բաղդաւորութիւն մը կը կարծէ իրեն անոնց հետ ընկերանալը. և տեսնելով որ ծնողքն ալ հեռատեսութիւն չունենալով՝ իր ազատութեանը թողեր են տղան՝ ուզածին պէս պտտելու, կը հրա-փրեն զանի այնպիսի խրախճաններուն, ուր որ ազատութիւնը փափուկ և զրդռիչ համեմունքներ ունի, և զլուխ կը նստի սե-զանին։ Զկայ պարահանդէս մը, տեսարան մը, լրբենի ընկերախումբ մը, ուր չառնեն չտանին զանիկայ. և այնչափ կըսեն և կը-նեն, ինչուան որ ամէն համեստութեան պատկառանաց զգացմունքը լաւ մը մարած տեսնեն վրան. և ահա անկէց վերջը կարգը հաւատքին կու գայ, որուն մէջ չուտով որ-սը ձեռք առնելու համար՝ առջի բերան կը զովին զրքի մը վարպետ զուարճացնող խօ-սուածքը, ետքը անոր ձեռքը կու տան, և անիկայ ախորժանօք մը կարդալու կըսկսի.

և թէև առջի թղթերուն մէջ զուցէ անանկ մաքրութեան վնասիչ բաներ չգտնուին, բայց առաջ երթալով անանկ ըսուածներ կելլեն որ խիստ նուրբ ոգիները կը բռնկցընեն. անկէց ետև կամաց կամաց կարդը ուրիշ զրքերուն կու գայ. կիրքերն անանկ վրդովմունքով ոտք կելլեն որ՝ ալ մարդուս ձեռքը չըլլար չափաւորել զինքը անոնց կարդացմունքին մէջ։

Ա.նպարկեչտ բանաստեղծական զրուածքներէն եռքը կը յաջորդէ ծուռ փիլիսոփայութիւնը, վասն զի սրտին ապականութիւնը դիւրինկեկ մտքին կանցնի, որուն մէջ ազատասէր և անսանձ թարթափելով կըսկսի երկբայութիւն ցցընել հաւատքին երևելի երևելի ճշմարտութիւններուն, ինչուան որ յանդգնի օր մը ալ բացէբաց ուրանալու և ծաղրելու ալ։ Ա.յսպէս հաւատքը մէջ տեղաց վերցածին պէս՝ ահա քեզի մարդս անասուն և ամբարիշտ մը դարձած. վասն զի անկէ ետև մէջ տեղ կը մնայ մեղանչական քաղաքավարութիւն մը՝ աստուածային և մարդկային օրինաց կործանիչ, որ կը բռընկցընէ ազատութեան կատաղի սէր մը՝ պատրաստական խլելու խըզելու ինչուան նուիրական և սուրբ կապերն

ալ։ Անանկ մարդուն չկայ ոչ քաղաքացիի անուշ կապեր, և ոչ արենակցութեան և ազգականութեան այլևայլ աստիճաններ. պատրաստ է ամէնը մէկուստ ուրանալու, և բարձրաղլուխ պարծենալու իրեն անդամութեանցը վրայ։

Ուստի այսպիսի վտանգի մը մէջ չսահելու համար պէտք է որ զգօն պատանին նախ և առաջ ընտրէ իրեն խմատուն և երկիւղած առաջնորդ և հաւատարիմ ուղեցոյց մը կենաց, յանձնելով զինքը անոր ձեռքը, որ զգուշացընէ զանամէն վտանգներէն, և սորվեցընէ անոր չար ընկերաց շողոքորթութենէն և խորամանկութենէն ազատելու ճամբան, զանոնք ճանչնալու նշանները, անոնց յաղթելու կերպը և պատանձեցընելու հընարքը. և թէ որ միջոցներով կրնայ ամուր կենալ սուրբ հաւատոյ սկզբանց և կրօնի բարեպաշտութեան մէջ, լաւ մը ուշադիր ըլլայ անոր տուած բարի խորհուրդներուն և ազդարարութիւններուն, և սահմանած կարգաւորութենէն դուրս չելլէ։

Բ. Երկրորդ վտանգը՝ որուն սովորաբար նպատակ է երիտասարդական հասակը, և կը թուլցընէ անոնց վարքը, և ուժով մը կը տիրէ սրտին՝ մարդկային նկատմունքն է.

վասն զի ուր որ խորամանկները զլուխ չեն կրնալ ելլել պատանւոյն ողջախոհ և հաստատուն մտքին, ահա շատով կատակի դէնքին ձեռք կը զարնեն. առ քեզի քթին տակէն քմծիծաղ մը, կամացուկ ժպտել մը շրթունքներուն վրայ. ցաւակցողի զիմակով և նենգաւոր աղուեսաբարոյ աչքով կըսկսին նայիլ, կը մօտենան քեզի ծուռ ակնոցով. կոր զլխով և զուրս ցցած կզակով մը, կը քսուին կը մչտեն, արմունկով կը հրեն և կէս բերան անկըճէն վար կը ծամծմեն՝ ահա հաւի ձագ, դեռ նոր հաւկթէն ելած, հազիւ թէ թեերը բուսեր են, կաուցն ալ կը ցցընէ։ Ասանկ իրարու մէջ ունչ աչք ընելով, բաներ կը զլտորեն, խօսքեր կը նետեն։ Այս կատակի դէնքէն աւելի վախնալու բան է երիտասարդաց համար. վասն զի թէպէտ և ամուր սրտով մը տանին առելութեան թշնամութեան, բայց կատակի ոչ բնաւ. ասիկայ անձնասիրութեան երկու բերան սուր մը նէ՝ որ կը խոցէ և կը պատռէ միանդամայն։ Մարդկային ակնածութիւնը այնքան բանուկ է երիտասարդաց ըղեղին որ նոյն միջոցին ամէն մեծահոգի մտածմունքը կորսնցընել կու տայ, ալ յիշել չի տար իրեն ազատ ծնած ըլլալը, պա-

տիւ չի համարիր առաքինի բարեպաշտ ըլ-
լալը, քանի մը խենթուխելառ մարդոց խօս-
քին դերի կընէ. որ բանն որ զողերը, ստա-
խօսները և խարդախները իրենց չարագոր-
ծութիւնը պարարկելու համար կը գործա-
ծեն, անիկայ իր բարեգործութիւնները պա-
հելու կը բանեցընէ. այնպէս որ ազօթք ընե-
լու, բարեպաշտական հոգւոր գիրք մը կար-
դալու համար կերթայ կը պահուըտի տանը
մէկ անկիւնը, պատարագ մը լսելու և սուրբ
հաղորդութեան այցելութիւն ընելու՝ հեռու
և պարապ եկեղեցիներ կը փնտրուի. խոս-
տովանութիւնը գրեթէ զողութեան պէս կը-
նէ՝ անծանօթ քահանայ մը փնտրուելով. կը
նայի որ քիչ քիչ աշխարհասէր և լայնահա-
ւատ քրիստոնեայ մը ծախէ գինքը. և թէ-
պէտ առջի բերան խղճմտանքը այլայլած՝
կը խառնվի կը խայթէ գինքը, բայց վերջէն
խղճմտանքին ազդարարութեան անկաճ չը-
կախելով և արհամարհելով, քիչ քիչ բո-
լորովին կատարեալ անհաւատի ճամբան
կը բռնէ։

Բայց թէ ասանկ ախտ մը բժշկելու ու-
նիմ՝ արդեօք բաւական բանուկ դեղ, գիտ-
ցածս ասիկայ է. ով որ վեհանձն ու բարե-
խառն հոգւոյ մը վիճակած է, և սրտին մէ-

ջը ազնուական և արիական մտքեր կըզ-
դայ, երդիծաբանութեան և կատակի խայթ-
մունքներէն չառներ ամենեին։ Բայց ահա
ասանկ զեղեցիկ իշխանական դիւցազն հո-
գին սուրբ ազատութենով ու մեծահոգիու-
թեամբ մը զարդարեալ՝ մեր օրերը ցանցառ
տեսնուած բաներ են։ Խելացի պատանիի
մը մարդկային ակնածութեան դէմ բանե-
ցընելու միջոցը աշխուժութիւնն է, որ ու-
րիշ բան չէ, եթէ ոչ՝ բաց ճակատ, երեսի
շնորհք, աչքի կայտառութիւն մը, մէկ ա-
ռաքինի ազատութիւն, համարձակութիւն,
մէկ պատրաստութիւն մը՝ շարժմունքին
շարժմունք, խայթմունքի խայթմունք չա-
փելու և աւելի ալ վրան տալու. որով չա-
բամիտներուն նեռը կը բթեցընէ, և մէ-
կուստ նեռողին երեսը կը դարձընէ։ Ա.Հ-
խոյժ պատանւոյ մը չտեսայ երկու անգամ
խայթիլը. ամէնքը կը վախնան անկէ, ու
զանի մեծ ոմն կը համարին. ու թէ աւելի
պինտերես ու սկրթած մը դէմն ելլէ, եղ-
ջիւրները կոտրած, կտոր փրթուած կոր 'ի
գլուխ կըստիպի ետ դառնալ։ Ա.յսպիսի
վեհանձն հոգւոյ տէր պատանի մը պատահ-
մամբ ծոմի օր հրապարակական պանդոկ
մը դանուելուն՝ պահոց կերակուր կը խընդ-

ըէ՝ առանց ակնածութիւն մը ընելու խել մը ցոփ երիտասարդներէն, որ հոն տեղ պարարտ և բարեհամ թռչուններ իրենց մէջը կը բաժնեն. թէ որ ելլէ հոն կոպիտ մը երեսը դարնէ իրեն ան բանը, անիկայ ծիծաղ մը փրցընելով, կը դառնայ կըսէ ա-նոր՝ ափսոս, իրաւունք ունիս բարեկամ, որովհետև վատուժ ու հիւանդոտ ես, նիհար կը տեսնեմ երեսներդ. պէտք է քեզի զո-բաւոր մսի ջրով և թեթև թռչնոյ մը պա-տառով քիչ մը ուժ առնել, ես ըստ բաւա-կանին ջղատ և լեցուն եմ, ու քիչ մը բարա-կամիտ ըլլալու համար խոտեղէն ուտելու հարկաւորութիւն ունիմ։ Եւ թէ ասկէ ա-ւելի կծու մը դպչել պէտք ըլլայ, կը կանչէ երեսէն վեր՝ ինչ, միթէ իմ ձուկս աչքիդ անմաքուր կու գայ, կամ թէ իմ ճաշիս գինը դմուն պիտի վճարես, քեզի ինչ, ուզածս կուտեմ։ Երբոր այսպէս ամօթէն ափիբե-բան կըլլայ անիկայ, և խօսքը կէս կը մնայ բերանը, մէկալնոնք մէկբերան կը կանչեն՝ քաջէ, բարի է, ահա երիտասարդ մը ա-զատ և իր սկզբունքներուն մէջը հաստա-տուն։ Ահա ասանկով ամէնը կը վերջանայ մէկ բարձրաձայն ծիծաղով և գաւաթ գաւ-թի զարնելով և կեցցէ պռռալով։

Գ. Երրորդ վտանգ մընալ ամբարիշտ գրոց կարդացմունքն է, որուն վրայ պէտք է որ քիչ մը քալեմ հոստեղ, և ազդեմ իմին բարեկիրթ պատանիս՝ թէ ինտոր զատաս-տան ընելու է։ Ցեղ մը պատանիներ չարին հակամէտ, դպրոցին մէջ եղած ատեննին խելուընին ուրիշ բանի չեն տար, բայց եթէ գողունի ճամբով ձեռքի տակէն բերել տա-լու աս ան անճոռնի ամբարիշտ բանաս-տեղծութիւններ և անպարկեշտ գրուած-ներ։ Եւ որովհետև արթուն կրթիչները ար-գելած են աս տեսակ գրուածներն որ չըլ-լայ թէ բանաստեղծութեան և ճարտասա-նութեան արուեստին գեղովը՝ մոլութեան թոյնը խմեն, ատոնք վարպետներուն ըրա-ծը իբրև խղճահարութիւն մը ծաղր կընեն։ Դպրոցէն եկածնուն պէս՝ հայրական ներո-զամտութիւնը և ցոփ ընկերաց նպաստը ա-ռիթ գտնելով՝ այսպիսի թունալից գրեանք-ներու ամբողջ հատորները ձեռք ձգելով, գիշեր ցորեկ մէկ կընեն անոնց մէջը թար-թափելու։ Ասկից կըլլայ բարեկամաց վրայ դարմանք՝ վերացեալ յափշտակեալ մը տես-նելով զանոնք, տարակուսանք մը ծնողաց այնքան երկար ժամեր խցերու մէջ գոց փակուած մնալնուն. պզտի եղբօրը՝ վրայ

գալուն պէս, մէկէն գիրքը գոցել, երեսին գոյնը նետել, նեղսրտութեամբ պատասխան դարձընել. և պէսպէս պատճառանքներով խցէն դուրս նետել զանիկայ. և ետքն ալ գիշերուան մեծ մասը ան անպիտան գրքերուն կարդալովն անցընել. առտուն ուշ ելլել, քնհատ աչքով և դեղնած դէմքով։

Ո՞չ ապաքէն աս պիղծ գրքերուն կարդացմանը ժանտ պտուղն է՝ բարեպաշտական գործքերէն ճանձրութիւն իմանալ, սուրբ խորհուրդներէն հեռանալ, անմեղ ընկերներէն փախչել, տան մէջ անհնազանդ, կամապաշտ և տմարդի ըլլալ, կընտանալ պնտանալ ամէն տեսակ մոլութեանց մէջ։ Եւ իրաւցընէ այսպիսի կարդացմունքներէն առաջ եկած աղէտալի հետեւանքները մէկ մէկ պատմելու բան չէ. վասն զի բարի վարքէն շեղելէն 'ի զատ, ուրիշ շատ վնասներ ալ կու տան. դիտէ մէյ մը անանկներուն երեսը, և կը տեսնես միշտ տրտում՝ տխուր և լռիկ. տան մէջ վայրենի է, խցին մէջ մինաւոր շուտ շուտ կը պտըտի, կամ կը թողու գինքը լեկած բազմոցի մը վրայ, աչքը գետինը տնկած, պահ պահ գինքը ցնցելով վեր վեր կը նետէ. կը փախ-

չի հրապարակական ճեմելիքներէն, ու թէ քաղքին մէջը խիտ ծառաստան մը գտնէ՝ հոն կերթայ կը թաղչի, բնաւ զուարթ երես մը չի ցցներ, ամենևին չի խնտար եղբօրն երեսը, ծնողաց խրատէն և բարեկամաց յորդորանքէն զգաստանալու տեղ՝ աւելի կատաղի ու վայրենի կըլլայ։ Ահա ան տեսակ բանաստեղծական մութ գրուածները իրենց վառվռուն հրապուրանքներովն այնպիսի ուժ մը ունին որ ան սաստիկ երևակայութիւններուն պտոյտքովը վեր վար կընեն ու մարդատեաց կը դարձնեն նոյն իսկ կարդացողը։

Հապա ուշիմ պատանի՝ թէ որ պատահմամբ ձեռքդ իյնայ այսպիսի գրքեր, զգոյշ եղիր վրադ, նայէ ուր կոխելդ, չըլլայ թէ յանդգնութեամբ և յանձնապաստան հետաքրքրութեամբ արհամարհելով մենծեռուդ խրատը՝ ծուռ տեղ մը կոխես և գլորիս փոսը։ Ամէնէն խելացի և ապահով ճամբան, Աստուծմէ լոյս խնդրել և գիտնաւոր բարեպաշտ մարդու մը խորհուրդ հարցընել է։ Բայց թէ որ ասանկ մէկը չունիս, գոնէ քննէ նայէ՝ թէ հաւատոյ մասերուն, կրօնքի յարգութեան, եկեղեցական կարգին, թագաւորաց իշխանութեան, քաղաքական

սուրբ ընկերութեանց ինչ ոճով ինչ հոգւով կը խօսի. վասն զի աղանդաւորները որը շատ որը քիչ կնիք և նշան մը ունին, որ ինչ ըլլալին կիմացընէ։ Ասիկայ հիմակու դարուն չար հոգին է, որ օձի պէս գրքերուն մէջ մտեր սողոսկեր է, և իր ծածուկ մահաբեր թոյնը հոս հոն կը թափէ. վասն զի ընդհանուր կերպով կը գովէ հաւատքը, բարեպաշտութիւնը, առաքինութիւնը. վեր կը վերցընէ մարտիրոսաց արիութիւնը, ճգնաւորներուն ապաշխարութիւնը, խոստովանողներուն աստուածսիրութիւնը. բայց՝ի մանաւորի այնպէս մը կը խօսի որ առանձին մէկին կամ մէկալին գալուն պէս՝ ահա ժայռ մը, ուր գլուխը կը զարնէ։

ԳԼՈՒԽ Ը.

Թէ բարեկիրթ պատանի մը աշխարհիս զուարճութիւններուն մէջ ինչ ձաշակ և որպիսի ընտրողութիւն պիտի ունենայ :

Ա. Զբօսասէր երիտասարդութիւնը աշխարհիս վայելմունքներուն արդէն 'ի բնութենէ յօժարեալ, անընտրողաբար և չափազանց բերմունքով տալով զինքը խելմը վտանգաւոր և հրապուրիչ զուարճութիւններու, կը վնասէ անմեղութեան և առաքինութեան. ուստի այսպիսի տարբերութիւններու կարօտ տեսնելով, զանց չեմ ըներ յիշեցնել, մանաւանդ թատերական խաղերուն և երաժշտութեան՝ որուն հոստեղ հրաման է ինծի քիչ մը դպչիլ :

Հիմակուան ժամանակին համար թատրոնը դէշ բան է ըսել, ընտոր որ հին հայրերը կը սնդէին, արտաւոց խօսք մը ըսել կերևնայ. վասն զի անոնց ըսածը հե-

թանոսական թատրոններուն համար էր, ուր որ ամենայն խօսք սիրոյ վրայ էր։ Հոն լիրբ երիտասարդները խորամանկ վարպետութիւններ կը ներկայացընէին, ծնողական պարտուց դէմ որդւոց անհաւատարմութիւն, ամուսնական նուիրական կապերու սրբապղծութիւն, թագաւորական իշխանութեան դէմ հպատակաց ապստամբութիւն։ Հոն դերասանները խաբեբայ կերպեր ունէին, ափեղջփեղ շարժուածքներ ձեռք և անպարկեշտ զարդերով հիւսուածներ ու հագուստներ. ստէպ կըլլային ծաղրածութիւններ կատակներ, բաց նմանութիւններ. ողջախոհ անարատ վարքը ծաղր եղած էր, բարեկրթութիւնը կատակի առնուած, օրինաց սանձը հայհոյած, առաքինութիւնը պարսաւած, մոլութիւնները գովուած և ազատութիւնը գովուած, և ասանկ ամէն բանին համը հոտը փախած։ Աղէկ ըրին սուրբ վարդապետք իրենց ժամանակի քրիստոնեաներուն այսպիսի տեղուանքը երթալն արգիլելնին։ Բայց հիմա կու ժամանակին թատրոնները անմեղ բան մըն է, կըսեն, հոն կերթըցուի՝ առանց մեղայ երաժշտութիւն մը լսելու, ճանճրանալի կենակցութեան մը չբռնուելու դիտ-

մամբ, բարեկամաց հետ զուարճալի տե-
սութիւններ ընելու, քաղաքական և առև-
տրական գործոց վրայ բան հասկընալու,
ծուլութենէն և դատարկութենէն ազատե-
լու համար։ Բայց քիչ մը կեցիր նայինք՝ թէ
ասոր համար կերթան, թէև ըսեն և պըն-
դեն՝ թէ հոգևոր ըլլալու և գործք ողորմու-
թեան տեսնելու կերթան հոն. և պատճառ
ալ կը բերեն այսպէս ըսելով, վասն զի ալ
հիմակ թատրոններուն մէջ սիրոյ վրայ
խօսք չըլլար, կըսեն. այլ կը տեսնես որ որ-
դիքները հոն հնազանդ կը ներկայանան
հայրական քաղցր լուծին ներքև, ամուսինք
հաւատարիմ նուիրական կապանքին տա-
կը, հպատակները հնազանդ օրինաց պար-
տուց մէջ, դերասանները կըսես նէ՝ հա-
զուստնին և ամէն կերպերնին պարկեշտ.
զուարճարանութիւնները՝ բարոյականին
երևելի վճիռները զուրս կու տան. օրինաց
յարգ, թագաւորաց հպատակութիւն, կրօ-
նից երկիւղածութիւն, առաքինութեան պա-
տիւ, ապստամբութիւնն անիրաւ, մոլու-
թիւնն ատելի, բարին գովելի և չարը պար-
սաւելի։ Բայց թէ պատահմամբ երբեմն բա-
րի ճամբէն քիչ մը զուրս ելլելու ալ ըլլան,
մի կարծեր, կըսեն, թէ մեր օրերուն մար-

դիկները կը գայթակղին անկէ. գիտեն ա-
նոնք քիմիական բնալոյծ արուեստիս մը
թոյնը բանեցընելու տեղը հիւանդը առող-
ջացընելու։ Ահա քեզի իրաւցընէ նոր հը-
րաշք հիմակու քիմիականութեան։

Ես միտքս դրեր էի ատ մտքէն փոխել
զքեզ, որ ստէպ թատրոններն երթալով՝
անմեղութիւնդ վտանգի մէջ դրած կըլլաս,
քիչ քիչ անոր զարնուելու պատճառաւը
բարեկեցութեան մէջ թուլնալով։ Բայց վա-
խուս որ չըլլայ թէ ան կարծիքէդ փոխելու
զքեզ աշխատելովս՝ տխմար մարդու մը տեղ
դրուիմ, և ոգէտ՝ ժամանակի դարուս հո-
գւոյն, այսչափ միայն կըսեմ. թէ որ հի-
մակուան թատրոնները իր հնուց մեղքին
վրայ զղջալով՝ բարւոյն և համեստութեան
գաղափարին քիչ մը մօտեցեր են ալ, որ
չեմ կարծեր, 'ի վերայ այսր ամենայնի,
քեզի պէս գոյրոյէն նոր ելած դեռակիրթ
պատանիի մը՝ որ անփորձ առաքինու-
թեանց վարժին և բարւոյն մէջ անհաս-
տատ, և որուն խառնուածքը և բնաւորու-
թիւնը արիւնային և տաքցուխ, որ հաղիւ
թէ աշխարքիս ունայնութիւններուն և մրըր-
կայոյզ փորձութեանց դէմ մէկ շատ նե-
ցուկներով կրնայ դիմանալ, և իր բարե-

պաշտութիւնը պահել, ստէպ երթեւեկու-
թիւն ընելով թատրոնները, որ քիչ քիչ իր
արիութիւնը կը մեղկէ և առաքինութիւն-
ները կը զոզնայ, մեծ վտանգի մէջ դրած
կըլլայ զինքը, բոլորովին ուղիղ ճամբէն
դուրս չեղելու, և երթալով անառակ ան-
զգամ և անկրօնին մէկն ըլլալու։

Բ. Նոյնը ըսել կիյնայ և պարահանդէ-
սին համար ալ։ Մեր անմեղ դարերը, կը-
սեն, որ ամէն բանին պարզամիտ աղա-
նիի աչքով նայել սորված է, պարահանդէ-
սին մէջն ալ աչքին զարնելու վնասակար
բան մը չի գաներ՝ որ համեստութեան դէմ
անպարկեշտ մտածմունք ու զգացումն
պատճառէ։ Երանի թէ. բայց լսեր են հո-
զոյ սրբոյ վճիռն որ կըսէ՝ թէ ամօթխած
և իր կուսութեանը զարդերով հագուած կա-
պուած զաւակը պէտք է որ զգոյշ կենայ՝ իր
դեղեցկութեան զարդերէն չթալլուելու։
Նոր հարս մը իր պարկեշտ և պատկառելի
հագուստին ներքև դեռ կը նմանի կայծի մը՝
որ բաւական է անզգոյշը խանձելու։ Բայց
'ի վերայ այսր ամենայնի՝ աշխարքիս հոգին
պարաւոր օրիորդաց տեսքով զուարճա-
նալն անմեղ բան կը սեպէ ու բան մը չըզ-
դար եղեր ան բայց երեսներէն, ան թեթև

ցատկրտուքներէն, ան փոփոխ ձեռք ձեռքի տալերէն, և ան խեղճացած կոտրտուք քաղուածքներէն, որոնք բաւական եղեր են աշխարքէս քաշուած և ծոմապահով հալած մաշած անապատաւորներուն ալ երևակայութիւնը պղտորելու և փորձելու. զարմանալի բան։

Ուստի պարին երևելի երևելի պատճառներուն համար բարի վարուց և համեստութեան վնասիչ ըլլալը՝ թէ չեն համոզեր զքեզ ետ կենալու այնպիսի վտանգաւոր խաղէ մը, զոնէ զգաստացընէ զքեզ երևելի և մեծանուն հեղինակներուն վկայութիւնը, որ կարդիլեն զանիկայ բժշկական սկզբանց դէմ իբրև խիստ վնասակար առողջութեան ան շուտ շուտ պտոյտներուն, մրրկալից դարձուածներուն և սաստիկ ցընցումներուն համար։ Այս խօսքերէս թող իմաստասիրեն բարեկիրթ և զգօնամիտ եղողները, թէ ինչ կարծիքի վրայ ըլլալ պէտք է պարին համար։

Գ. Երաժշտութեան վրայ կարգը բերելով խօսելու, ես ալ քեզի հետ մէկ կըլլամ հաստատելու՝ թէ անիկայ արարչէն պարգև մը տրուած է մարդուն. որպէս զի ձայնին անուշութեամբն իր բազմավիշտ կենաց հո-

ղերը մոռնալով, օրական վիշտերը և աշ-
խատանքները դիւրանան իրեն։ Իսկ եթէ
այլևայլ վտանգի պատճառ կըլլայ եղեր,
ոչ թէ իր դիւտերուն անուշութեան և ճար-
տարութեանը կողմանէ է, որով կը թաթխէ
հոգին՝ ընկերակցընելով աստղերուն երկ-
նային ներդաշնակութեան, բնութեան խոր-
հրդաւոր ձայնարձակութեան, հրեշտակա-
կան դասին քաղցրաձայնութեանը, և նոյն
իսկ անստեղծ խմաստութեան աստուա-
ծային սիրոյն յորդորմունքովը. վասն զի աս
նկատմունքներուն կողմանէ երաժշտութիւ-
նը ուրիշ բան չէ, եթէ ոչ սիրտը առ Աս-
տուած վերցընել և զմայլիլ անոր։ Հապա
վտանգը՝ որուն համար կը պարտաւորիմ
աղդելու քեզի, մինակ իր սիրահարական
խաղերուն և անոր ընկեր եղողներուն կողմանէ միայն է, որ շատ անգամ այնպիսի
անուշ ու փափուկ արուեստի մը տիրող
բնութեանը միջնորդութենով կարէ կը
խանձէ կուսական զեղեցկութիւնը, ծառայ
ընելով անպարկեշտ յօժարութեանց և լը-
բենի զուարճութեանց։ Կը գտնուին խել մը
խորամանկ համբարուներ՝ որ իրենց փա-
փուկ երգերուն և ձայնական և գործիական
երաժշտութիւններուն անուշ և զմայլեցու-

ցիչ հնչմունքով անփորձ երիտասարդաց խելքը միտքը կառնեն, ոչ միայն ըստ մարմնաւորին դրամական տուժեր և տուգանքներ տալով, այլ որ մեծն է՝ ըստ հոգևորին ամէն ցեղ թշուառութեանց անդունդը տանելով ձգելով։ Ձեզ զիտեր դուն որ քանի քանի հայրեր լացին, և որչափ զերդաստաններ թառամեցան՝ քնարի կամ երգի մը չարաչար զեղծմունքովը աղէտալի հետևանքէն։

Ասոր համար քու ախորժակներդ զսպել կամ դոնէ չափաւորել պէտք է, ոչ միայն աս տեսակ զուարճութեանց մէջ, ուր աւելի վտանգին համար հարկ է չափաւորութեամբ և զգուշութեամբ քալել, այլ և աս կիս աւելի նուազ անմեղ զբօսանքներու մէջ. որպէս զի չըլլայ թէ առանց խոհեմութեան անընտրողաբար մոլութեան մը չարաչար ծառայ և զերի ըլլայ անձնիշխան մարդս, որ ամէն ժամանակ և ամէն բանի մէջ կը պարտաւորի իր ազատութեանը հետ քրիստոնէութիւնն ալ անարատ պահել՝ պահելով իր բարեկիրթ դաստիարակութեան պատուը, որուն վրայ դարձաւ ինչուան հոս բովանդակ զրուցատրութիւններուս նպատակը։

ԳԼՈՒԽ Թ.

Թէ բարեկիրթ պատանին հիմակու դարուս մեղանչական հետաքրքրութեան հոգւոյ ինչ միջոցներով պիտի դեմ դնէ :

Ա. Զէի ուզեր ասկից անդին աւելի մասնաւոր բան մը ըսել. վասն զի կարծեմ թէ ըստ բաւականին արդէն խմացուցի վտանգները, որոնց հասարակօրէն դիւրինկեկ կրնան նպատակ ըլլալ դպրոցէն նոր աշխարք ելած պատանեկաց խումբը։ Բայց ահա հոստեղ մէկ նոր զօրաւոր մտածմունք և սուրբ նախանձ մը կը մղէ կը յորդորէ զիս անսովոր ոճով մը խօսքս առաջ քշել հիմակու նոր դարուս ժամանակակից մարդկանց չափէ դուրս հետաքրքրութեանը դէմ, որ ամէն բանին սուրբ և անսուրբ՝ կուզէ իր աչքերը տնկել, և հինն ու նորը լիզել լափել, ու գաղանիք մը դուրս չթողնել, նոր վըտանգի մը մէջ ղնելով իր հաւատքը և անմեղութիւնը։ Հետաքրքրութեան վառվռուն

բոց մը դարէ՝ ի վեր կը յուզէ և վերուվար կընէ աշխարհքը, և անհանդարտ զրգիռով մը նորելիք բաներու ետևէն ըլլալով՝ անդուսպ և ազատասէր հետաքննութեամբ նոր աշխարհք մը կուզէ վերաստեղծել հնոյն մէջ։ Ուր որ իր զննութեան մէջ գաղտնիք մը կը գտնէ, կոյրզկուրայն հոն կը վազէ՝ աչ ահեակ չնայելով, և իր բաւականութենէն դուրս և ճանաչմունքէն վեր յանդգնութեամբ մը չափելու կելլէ անդունդները։ Ուր բաներն որ հինները չգիտցան, կամ չգիտնալ ցցուցին, նշանով և ուրուագրութեամբ կը ծածկէին, կամ թէ ուրիշ բան չէին կըրնար նէ ընել՝ ռամկէն ծածուկ կը պահէին ու միայակ գիտնաւորներուն կը թողնէին յայտնել, մեր օրը յայտնի բաց է ամէնուն առջև։ Դար մը, ուր ամէն բան ամէնէն տեսնուած է. կախարդական ճրագները արդէն վառած կեցեր են, ամէն երևոյթը մօտ եկեր հասեր է աչքիդ. ահա մարդկային և բնութեան բաներուն ամէնը մերկ առանց քօղի մէջ տեղ կեցեր է, պատրաստէ աչքերդ, աղէկ մը սրբէ չփէ աս լուսաւորված դարուս հրաշալիքները տեսնելու լսելու։ Ա. հա լեռները կը բացուին քեզի, դուրս կը թափի երկիրը. ծովուն խորերը երևան կել-

լեն, հրաբուղխներուն անդունդը հարթա-
յատակ կըլլայ, երկընքին դռները կը բա-
ցուին, մոլորակները աստղերը քովդ կիջ-
նան. ձիւնին, կարկտին, եղեամին շտեմա-
բանները դատնուած են, թէ ուր կայծակը
կը պահուի, ինչպէս կը զոյանայ, ընտոր կը
զոռայ. հիւսիսային արշալոյսը իր գաղ-
տուկները մէյմէկ անկըճէդ վար կը դուրցէ.
ուսկից լոյս կառնեն, ինտոր կը մարին և
նորէն կը վառին. բեւեռին սառոյցները իր
կատաղի գաղաններն առջեւէդ կանցընէ, ու
ներքին Ամերիկէին այրած աւազուտը իր
կէս միլիոն վիշապները դիմացդ կը շարէ։
Ամէնը տես նայէ. ու թէ որ ասոնց մէջ
ուրիշ նորելիքի մը հանդիպիս անծանօթ
քեզի, կամ թէ խորունկ քննութեանդ դէմ
արգելք մը ելլէ, թող առաջ դան թափին
երկրաչափները, բնագնիչները, մագնի-
սարանները, բնալոյծները, և իրենց սուր
և նուրբ նորելիք գննութիւններովը չափեն
չափչփեն, մեկնեն պարզեն՝ նոր լրեր և
պայծառ լոյսեր տալու քեզի, թէև հոգ չէ
որ իրենց վարդապետութիւնը եկեղեցւոյ
սուրբ վարդապետաց համաձայն չըլլայ, և
յիրս յիրս հակառակութիւն ունենայ հին
քրիստոնէական վարդապետութեան հետ։

Վ.ասն դի հիմակու բնազննիչներուն շատը աստուածային նախախնամութեանը զարմանալու տեղ՝ որուն պայծառ լոյսը աչքերնուն առջևն ունին, անհաւատի պէս կուրանան դանիկայ, և ստեղծողը ստեղծուածներուն մէջ երկրպագելու տեղ՝ կը հայհոյեն. ուստի և անոնց զննութեան մէջ պարապելն է փնտրուել հաւատքին կենդանի լոյսը և ճշմարիտ իմաստութեան եռանդը։ Ա.սանկով բարակամտութիւններին դէշին կը բանեցընեն, տկարացընելու և ջնջելու աստուածային գրոց անսխալ ճշմարտութիւնը. իբր թէ Ա.ստուծոյ խօսքը վեց հազար տարիէն ետքը սուտ ելեր է, որ յաւիտենական և անփոփոխ ճշմարտութիւն է. ահա նոր իմաստունք, նոր գաղիրք աշխարհիս այսորիկ։

Ա.յսչափ 'ի հաւատոյն. հապա 'ի բարի վարս գալուն՝ ինչ ըսելու է, ան բաց և անպարկեշտ նկարներուն և քաշուածներուն՝ որ 'ի տես ժողովրդեան համարձակ կը դրուի խանութներուն ճակատը և գրքերուն կողքին վրայ, և ան անվայել մերկ արձանիկներն անդամաղնիչներուն գրասեղանին վրայ. մեր մէյմը ան հանդիսարանները ուր որ անհամեստ պատկերներ, մերկ արձաններ

և ուրիշ անվայել հնոտիքները յայտնի հրա-
պարակաւ զրուած կը տեսնուի, որ այնքան
աւելի կը մոլեգնեն՝ որչափ աւելի կը բերկ-
բեցուցանեն, և այնչափ եւելոք վնասակար
են՝ որչափ որ առաւել կը խաբեն զգայու-
թիւնները և սիրտը կը թունաւորեն։ Եթէ
տարիքն առած և բնութեամբ երկիւղած
մարդը կը զգուշանայ ատանկ տեսարաննե-
րէն, որչափ աւելի պէտք էր զգուշանալ
անփորձ պատանին. այլ գէշն ան է որ՝ ան-
զգոյշ ծնողքներ անտարբեր կը կենան ա-
տանկ մերձաւոր առիթներէն՝ թող տալով
զաւակացը ուր որ ուզեն մտնեն ելլեն հա-
մարձակ. որով քիչ ժամանակէն ալ կը տես-
նեն որդւոցը վրայ գառն պտուղներ, փո-
խանակ որ անոնց երկիւղած և անարատ
քաղաքավարութեամբը պիտի զմայլէին։

Այսպէս ահա՝ բնական զիտութիւնն ու
դեղարուեստից ուսմունքն որ մարդուս մըտ-
քին կատարելագործութեան և կիրթ ա-
խորժակացն առիթ պիտի ըլլար, հիմակու
նոր դարը զանոնք զայթակղութեան և լըր-
բութեան գործիքներ է։ Այսով չէ թէ միտքս
վար զարնել է ան ծննդաբանութեան և
անդամաղնութեան պատկերաց և զրո-
չուածոց մեծագործ հանդիսարանները՝ ինչ-

խանաց վեհանձն առատաձեռնութեամբը զարդարած, ուր որ գիտութեանց և արուեստից ուսանողները լիուլի կը գտնեն ինչ որ բնութիւնն ու արուեստը կրնայ պատրաստել հրահանգելու գիրենք. հապա ժամանակիս դարը ողբալ է. վասն զի կուսական ամօթն որ համեստ բնութիւնը պատկառելի քօղով ծածկեր էր, կը հրապարակուի 'ի գայթակղութիւն անմեղաց։

Բ. Մարդուս արդէն մէկ կողմանէ բնական դարձած է անդադար նորելիքներու ետեւէն ըլլալ. թող որ հազարումէկ բաներ ալ չօրսդին առած կը զրդուեն զինքը զանոնք ճանչնալ ու քննել. ալ ինչու պէտք էր դրսէն ալ օտարոտի զրգիռներ եւելցընել։ Միթէ բաւական չէին իր փորձութիւնները, ինչու նորէն աւջիններուն վրայ ուրիշ փորձեր և զրդումներ վերադիր ընել։

Բայց եկէ նայէ որ հիմակու լուսաւորեալ կարծեցեալ դարը նոր նոր քարոզիչներ հանելով հոս հոն, աղուր աղուր վարդապետութիւններ կընէ, և կարծես թէ ժամկոչներու պէս քուն եղողները քնէն կը խթէ և մութէն առ լոյս կը կանչէ ըսելով, բաբէ, ինչ անդիւտ խելք է քու խելքդ, դուն երիտասարդ մըն ես մեծ մեծ բաներու համար

ծնած. մեզք որ ան քու խղճահար վար-
պետներդ ասանկ ցամաք փիլիսոփայու-
թիւն սորվեցուցեր են քեզի, և զիտութեան
կողմանէ ասանկ չոր ցամաք պահելով խել-
քըդ ոստաքանց ըրեր վար ձդեր են։ Ա.
հիմայ մինակ ճղնաւորի զրքերը կարդալու
օրը չէ, քանի մը ասկէ անկէ ժողոված
կրճատած կիսատած ուսմունքներ. քեզի
պէս խելացիի մը անվայել բան է անանկ
ադքատին ամաններէ կերակուր ուտել, զա-
նոնք ճղնաւորներուն թող. ասկից ետքը
քեզի պէտք է աղնիւ հարուստ սեղաններ
նստիլ, շատ մը անանկ զրքերուն մէջ թար-
թափիլ որ գպրոցին մէջ վարպետներդ ձեռ-
քըդ չէին տար, գուցէ գպչելու ալ չէին
թողներ՝ արդելուած է ըսելով։ Դուն ալ
հիմակ խելացիներուն կարդն ես. եկեղեցին
արդելած է վարպետ զրիչներուն զրքերը
չէ թէ մեզի քեզի պէս զիտնաւոր մարդոց,
հապա զիւրահաւան տիսմար ռամկին, ին-
չու որ՝ տգիտութիւնը կարգաւորներուն
բանին ձեռք կու տայ։ Ա.րդելեալ զրոց
ցանկն ալ իր առջի ուժին մէջը չէ. և միթէ
կարծես որ աղէկ բան ըրին՝ ան վարպետ
ձեռքերուն զրիչները պատժելով, որոնք
նոր նոր զերազանց վարդապետութիւննե-

բով այնչափ հատոր գրքեր լեցուցեր են։ Ա.փառ՝ս, կը մորմոքիմ, տեսնելով գրեղ ասանկ ամէն բանին մէջը յետնեալ և անփորձ, աշխարքիս մէջն այնչափ աղտոր տեսնելու ճանչնալու բաներ կան, ու դուն ասչափ ժամանակ ան մութ դպրոցին չորս պատին մէջ կենդանի կենդանի թաղուած մնացեր ես։ Բայց ասկից վերջը հոգ մը՝ներ. ահա քեզի աս օրուան նոր դարս խել մը գրաղէտ մարդիկ կու տայ, որոնց առաջնորդութեամբը կրնաս լուսաւոր ճամբաները բռնել. և զանիկայ ճանչնալու մէկ հատիկ ճամբան՝ հիմակու գրիչներուն և գեղեցիկ գիտերուն ետեւէն ըլլալն ու հարցընել փնտրուել և ուսման ճեմարաններուն անգամ գրուիլն է. վասն զի հոն կը ժողուին ամէն տեղաց գիտնաւորները. հոն կը գտնես ամէն գիտութեան գրքերը և իւրաքանչիւր ազգաց քերթողները։ Գիտնաս որ երեսելի հեղինակներուն անունը չես կրնար իմանալ, ինչուան որ մեր ուսանողներուն հետ ընկերութիւն և բարեկամութիւն չընես. անոնք են որ երիտասարդները պատուոյ և փառաց լուսաւոր ճամբաները կը տանին. վասն զի բոլոր Եւրոպային համալսարաններուն, մանաւանդ Անգղիային

և Գաղղիային երեսելի օրագիրներուն հաղորդակցութիւն ունենալով՝ քու անունդ ալ իրենց պէս անմահ ընելով նոր Մասիսներուն գլուխը հնչել կու տան։

Որդի, հիմա ալ ինչ ասկից անդին ճոռոմաբանութիւն կրնար կարկտել քեզի ան քու իմաստակ բարեկամդ, հին ճամարտակաց հետևող։ Իրաւ ես քեզի չեմ կրնար անոր պէս այնպիսի պայծառ հրաշքներ և փալփլուն փառքեր խոստանալ կամ երաշխաւոր ըլլալ. բայց կըսեմ՝ թէ ան քու ցամաք փիլիսոփայութիւնդ որ ծծեցիր դպրոցին մէջ, աւելի սնունդ կու տայ քեզի, քան թէ ան թանձր ու պարարտը, որ ջրով և փքով լի է, և դպչելուդ պէս՝ մէկէն կիջնայ ու կը սրմքի։ Հանդարտէ, հետաքրքիր միտք. ինչ կարծես, միթէ աշխարք ելլելուդ՝ ամենեկեկ պիտի գտնես քու հետաքրքրութիւնդ կշտացընող բաները. անսանձ և աղտաստէր հետաքրքրութիւն մը՝ ապօրինաւորը օրինաւորին հետ, հարկաւորը աւելորդին հետ քննելու իմանալու, կրօնքի և բնութեան պահուած ամէն գաղտնիքը խուզելու հասկընալու, և ամէնը չափաւոր մտքի մը խաբեբայ դատմանը կշիռքէն անցընելու անսուրբ ախորժակը՝ յանդուգն և ինքնահա-

ան քննասիրաց շատ սուղ նստաւ և բա-
զում կորստեան դուռ բացաւ՝ վերջէն անօ-
գուտ զղջումներ բերելով։

Գ. Արդ այսպիսի բուռն անսուրբ կրից
մը՝ որ ընդ աշխարհ ամենայն կը ծաւալէ,
և անկրօնութեամբ և անսրբութեամբ կը լե-
ցընէ, արդեօք կարելի է այնպիսի թում-
մը սահմանել որ աս հիմակու դարուս մե-
ղանչական հետաքրքրութենէն առաջ ե-
կած ընդհանուր անկարգութեանը բաւա-
կան ըլլայ դէմ դնելու, և չթողնէ որ իր
սաստիկ յորձանքովը աս ան երիտասարդ-
ներէն միամիտը իր հետը քշէ տանի։ Եւ
ինչու չէ. ահա սուրբ հաւատքը և աստուա-
ծային երկիւղը. ասկէ մեծ, ասկէ զօրա-
ւոր ալ ինչ թում և պատուար կրնայ ըլլալ.
որ ուժ, ինչ բռնութիւն բաւական կըլլայ
յաղթելու անոր։ Հաւատքը՝ որ իբրև երկ-
նային ճառագայթ մը իր յստակ լուսով
միտքը կը պայծառացընէ մոլորութեանց
մթուն մէջ, և կուրծքը սուրբ իղձով մը կը
ջերմացընէ. և Աստուծոյ երկիւղը՝ որ ճըշ-
մարիտ խնամութեամբ զգայական ախոր-
ժակները կը սանձէ, և մարդկային կրից
յարձակմանցը դէմ կը դնէ։ Եւ յիրաւի.
վասն զի Աստուծոյ ճշմարիտ հաւատացողի
և երկիւղածի տեսուն ով կրնայ մտենալ և

ինչ չարիք և փորձութիւն բաւական կըլլայ ընկճելու և յաղթելու անոր ամրութիւնը. չեմ լսեր ինչ կըսէ գիրքը։ «Երկիւղածի տեառն ոչ պատահեսցին չարիք, այլ 'ի փորձութեան զնա Աստուած պահեսցէ և փրկեսցէ 'ի չարեաց». Եկղես. լգ. 1։ Ուստի և իմ բարեկիրթ պատանիս ալ, որ զըպրոցին մէջ, դեռ ևս երբոր մանուկ էր՝ երկիւղած և իմաստուն դաստիարակաց ձեռքը, ցորչափ որ ասիկայ իր առջի խմելիք կաթը ունեցաւ և անով սնաւ աճեցաւ իր մատաղ հասակին ժամանակը, չվախնայ ամենեին, հապա իր բարեպաշտութենովը ու բարեկրթութենովը փոյթ ընէ միայն ամուր բռնելու իր ձեռքը սուրբ հաւատքին և Աստուծոյ երկիւղին կենաց ծառը՝ աշխարքիս ունայնութեանը մրրիկներուն և մարդկային դիւրակործան իմաստութեան լաբիւրինթոսին մէջ, ինչուան որ ասով լաւ մը պատսպարեալ և պաշտպանեալ՝ անցնի ապահովութեամբ երիտասարդական հասակին լարծուն դահավէժներէն, և հասնի ելլէ 'ի վերայ լերինն սրբոյ իմաստութեան բարձր տաճարը՝ որուն հիմունքը և խարիսխը, սկիզբը և ծայրը աստուածային սուրբ երկիւղն է՝ ըստ այնմ՝ «Սկիզբն իմաստութեան երկիւղ տեառն»։

ԳԼՈՒԽ Ժ.

Թէ ընդհանրապէս երիտասարդական բնաւորութեան մէջ որոնք են վնասակար մոդաբիւնները և որ առաքինութեամբ պէտք է դիմադրել անոնց :

Ա. Որովհետև ընդհանրապէս երիտասարդական բնաւորութեան մէջ գործարանաւոր կազմութիւնը արդէն իր բուն կեդրոնական ուժին մէջ գտնուելով իրրև լարած մեքենայ մը իրեն ամէն հարկաւորներով ու ամենակատար ետքի պատրաստութեամբը, զարմանալի չէ որ իր առաջին շարժմանց մէջն ալ տպաւորութիւնները սաստիկ և ցնցումները արտաքոյ կարգի արագ ըլլան, մանաւանդ որ մտադրութեան պակսութեան պատճառաւը տեղ տեղ ևս ընդոստ և կատաղի։ Ահա երիտասարդաց այսպիսի գործարանաց կատարելութենէն և արեան սաստիկ ջերմութենէն առաջ եկած պակսութիւն մը շատ անդամ գիւրաւ կրնայ

անցնիլ անոնց բարոյականին, ուրկէց կը ծագի իրենց բնաւորութեան մէջ քանի մը երևելի մոլութիւններ, որուն բարեկիրթ դաստիարակութեան գործն է իր հակառակովը առաջը առնել և կանոնաւորել. ապա թէ ոչ՝ անսանձ և ինքնագլուխ ըստ բերման թող տրուած, վերջերը ան սովորական և ունակացեալ կատաղութիւնը և բռնութիւնը անկարելի ըլլալով զսպել սանձելը՝ կը բնայ մեծամեծ կործանմունքներ պատճառել անոնց, և չարաչար աղէտալի հետևանքներ իրեն հետ բերել։

Ա.ռջի մոլութիւնը՝ յանձնապաստանութիւն և յանդգնութիւնն է, այս է՝ իր բնական ուժին և մեքենական զօրաւոր կազմութեանը ապաւինելով, որ 'ի սկզբան մեծամեծս կը խոստանայ անփորձ երիտասարդաց, տաք գլխով և ջերմ արիւնով մը, առանց աչն ու ահեակը մտածելու առաջ նետել գինքը, ձեռնամուխ ըլլալ այնպիսի գործքերու, որ թէ և մեծ՝ բայց անպէտ իրեն համար. մտիկ չընելով խրատի և չկշռելով գիմացինին ուժն ու զօրաւոր պատրաստութիւնը, մանաւանդ արհամարհելով ալ նախագասել գինքը և ճակատ կանչել զանիկայ, մեծամեծ ջարդել և խոստանալ, և

վերջէն գործքին կատարմունքին մէջ դը-
ժուարութիւն իմանալ. առանց զգուշանա-
լու վտանգներէն՝ զահավէժ հոսմամբ հոս
հոն յարձակմունքներ ընել, իր համբաւին և
ընչիցը հետ՝ միանգամայն առողջութիւնն ու
կեանքը վտանգին մէջ դնելով, վերջը ձեռ-
նունայն և առանց օգուտ մը քաղելու ետ
դառնալու հարկադրիլ։ Քանիներ եղան ա-
սանկ յանդուգն երիտասարդներ, որ իրենց
յանձնապաստանութեամբը մեծ մեծ ժայ-
ռերուն գիրենք զարկին, ահագին թշնամի-
ներ ստացան, մեծամեծ փորձանքներ բա-
ցին գլուխնին, որ եռքէն հաղիւ թէ շատ
աշխատանքով և հոգոզութեամբ կրցան գի-
րենք փրցընել. քանիներ ալ իրենց երի-
տասարդութեան ատեն ըրած յանդգնական
գործքերը ցաւելու լալու համար բազմա-
ժամանակեայ ծերութիւն մը չբաւեց, և որ-
չափ ալ եղան որ յանձնապաստան գործքի
մը բռնուած՝ իրենց ծաղկի հասակին մէջ
ցաւով և յուսահատաբար մեռան գացին.
և արդարև անկարելի է մէկ մէկ թուել հոս
յանձնապաստանութենէն առաջ եկած վը-
նասները համբաւոյ, առողջութեան, ընչից
և կենաց։

Ապա այսպիսի երիտասարդական խառ-

նուածքի բնաւորութիւն մը, որ իր չափին մէջ գովելի առաքինութիւն և չափէն դուրս վնասակար մոլութիւն կը համարի, գիւղական արիութեան սահմանը խօթելու համար, որ հասակին յարմար և քաջավայելուչ առաքինութիւն մըն է, պէտք է՝ի հարկէ ստանալ ծանրաբարոյութիւն և յառաջատեսութիւն մը, որ միշտ վերջը մտմտալով ըսել ընել կու տայ. չափով կշիռքով խօսիլ շարժիլ և ծանրաշարժ ոտքով քալել. իրեն չվերաբերեալ բանին չխառնուիլ, և գործոցը մէջ բնաւ աչքէն չփախցընել միջոցը, վախճանը և պարագան. շատ մը տաձել ու քիչ ըսել, հազար չափել և մի անգամ ձեւել, ինչպէս որ ծերերը կըսեն։ Այսպէս նոյն զգուշութիւնները և աւելին ևս պէտք է որ պահուին զրութեան մէջ. վասն զի խօսքը շատ անգամ մեռեալ և գիրը միշտ կենդանի ըլլալով՝ աւելի կտրուկ և սաստիկ ուժին մէջ վէրքն ալ խոր և միշտ թարմ է, ջնջելը դժուարաւ, ետ առնելը ամօթով կըլլայ. թող որ շատ հեղ ալ այլոց ձեռքը իր անմտութեանը յաւիտենական յիշատակ մը ձգելու առիթ է։ Իրաւ վատ թոյլ և երկչոտ հոգի մը՝ որ երկու ճամբուն վրայ կը կաղայ և դանդաղկոտ է գործքին

կատարման մէջ, արհամարհելի բան մըն է, մանաւանդ ան հասակին. բայց արի ոզին ևս ծանր է, միշտ չի շարժիր, անպէտ բանէն կամ կը փախչի կամ չիտեսնելու կը զարնէ. բայց ան ատեն շարժման մէջ և ոտքի վրայ պատրաստական կերևնայ՝ երբ երեւելի և դիւցազնական գործք մը անակընկալ դէմը կը պատահի, կամ երբոր պատիւը, հոգին, ընկերը, հաւատքը և հայրենիքը զինքը կը կանչեն փառաւոր յաղթանակի մը, հոն է որ իր ամէն ուժովը սասսիկ կը յարձակի և բուռն զօրութեամբ կը զարնուի. և նոյն միջոցին բան մը չի կրնար ընկճել և սրտաբեկ ընել զանիկայ։ Այսպէս բնութեան ուժին հետ պէտք է որ միշտ միացեալ ըլլայ խոհականութեան և ընտրողութեան ճիրք մը. վասն զի յառաջատեսութիւն ապագայից մեծ բան է. ծանրաբարոյութիւն՝ի սկզբան, և մեծահոգիութիւն յընթացս գործոյն, և յարատեւութիւն ցվախճան մեծամեծ գործոց բաւական և ամենայնի ընդունակ է. որ կարծես թէ բընական ուժին հետ գերբնական ուժ մըն ալ վրադիր ըլլալով, երիտասարդական բնաւորութիւնը կը կատարելագործէ։

Բ. Երկրորդ մոլութիւն մը՝ նոյն հասա-

կին տաքարիւն բնաւորութենէ առաջ ելած՝ անբարեխառնութիւն և անչափաւորութիւնն է, որ ըսել է՝ զգայական կամացը կոյրզկուրայն հետեվել, ընտոր որ ներսէն կուգայ, ինչպէս որ խելքը կը փչէ. չպահել համեստ չափ և սահմանաւոր կարգ մը գործքին կատարման մէջ, մէկ ծայրէն մէկալ ծայրը անցնիլ, ոչ աստիճանաբար ոտք ոտք, հապա ցատկռտելով առանց պահելու միջասահմանը՝ ուր որ կը կայանայ բուն առաքինութիւնը. կտրել խզել ամէն սանձը կապը՝ որ բնութեան ու կրօնքի մէջ պահեր են զինքը. ոտքի տակ առնել ամէն կանոնը և օրէնքը, և յանձն չառնել գլուխ ծռուել բանի մը, ծառայ և գերի ըլլալով իր ախտաւոր բերմանց և անզուսպ յօժարութեանց միայն։ Ո՞րչափ կան երիտասարդներէն, որ իրենց ուտելուն խմելուն, առնելուն և ընելուն մէջ չափ մը չգիտնալնուն համար, վնասելով իրենց առողջութեանը, զանազան հիւանդութեանց նպատակ, ծաղկի օրերնին հող մտան. և քանիներ ալ իրենց շռայլութեամբը և պէսպէս չարաչար դեղմունքներով ու անառակութեամբ ապրուստին մեծ մասը փճացուցին, և ետքի օրերնին հարկադրեցան մուրացկան և լի

ցաւօք տնանկութեամբ ապրելու։ Ի՞նչ պէտք է հեռուներն երթալ, միթէ նոյն բանը ամէն օր աչքերնուս ներքև չենք տեսներ։ Եւ ահա որ բանն որ չափով ու իր սահմանին մէջ մարդուս օրինաւոր անմեղ և օգտակար կրնար ըլլալ, մոլի եղողին իր չափէն սահմանէն դուրս գործածուելուն՝ կը դառնայ կըլլայ մեղանչական, ապօրինաւոր և վնասակար։

Այպա այսպիսի երիտասարդական հասակին անզուսպ բնաւորութիւն մը՝ մոլութենէն առաքինութեան սահմանը մոցընելու համար, պէտք է բարեխառնութիւնը կամ չափաւորութիւնը ձեռք առնել, թէպէտև որչափ զովելի՝ նոյնչափ ալ դժուարագիւտ առաքինութիւն մի է, որ միշտ ճիշդ չափ և արդար կշիռք ձեռքը՝ այնպէս կը պտըտի մարդուս գործոցը մէջ, երկու ծայրերէն փախչելով և միշտ միջին տեղերն իր աթոռը դնելով ամէն առաքինութեանց առաջնորդ կըլլայ։ Վասն զի բարեխառն մարդը, ողջախոհ է երիտասարդութեան ատեն, ուրախ ծերութեան ժամանակը, աղքատութեան մէջ զոհ, չափաւոր՝ հարըստութեանը, յաջողութեան մէջ խոնարհ, և ձախորդութեան ատեն համբերող. զիտէ

օրինաւոր սիրոյ չափը, օտարէն հեռանալով. թէ և առատաձեռն չըլլայ տուրքին մէջ, բայց կծծութիւն ալ չըներ. որով ամէն բանին մէջ համեստ ու վայելուչ եղանակաւ մը աչխոյժ բնութիւնը աղնուացըլով՝ ամէնուն աչքին հաճոյ ու սիրելի կընէ։

Գ. Դարձեալ նոյն երիտասարդական բընաւորութենէն ընդարձակ դուռ մը կը բացուի զանազան մոլութեանց՝ որոնց վրայ ինչուան հոս արդէն քիչէն չատէն խօսեր եմ. որովհետև մոլութիւն մը երբոր երես կառնէ կը չփանայ, ուրիշ մոլութիւն մը առաջ կը քաշէ, և մայր կըլլայ բազմազլուխ վիշապաց, որուն մէկ օղը բռնած, զնա աջ ահեակ, ուր որ կուզես։ Այսինքն է ազատասիրութիւն մը՝ իր զգայարանացը յօժարմունքը կատարելու, և ըստ բերման վարուելու. կամապաշտութիւն՝ իր խօսքը, կարծիքը յամառութեամբ առաջ տանելու. անհնազանդութիւն՝ ծնողաց և հրամանաց մեծերուն. անձնասիրութիւն՝ միշտ ամէն բանին մէջ եսութիւն և ինքնուրոյն ըլլալ մը խօթելով, առանձին օգուտը և անձնական շահը վերազասելու հասարակաց բարիէն. փառամոլութիւն մը՝ չափազանց մոլելով իր համբաւին և պատուոյն ետևէն.

կեղծաւորութիւն՝ չունեցածը ունեցողի պէս այլոց աչքին ձևացընելով. շռայլութիւն մը՝ ամէն ունեցածը վատնելով մսխելով ստուերի և ունայնութեան մը ետևէն։ Ասոնց հետ միացուր անհամբերութիւնը թեթև նախատինքի մը համար. բարկութիւնը՝ պզտիկ անիրաւութեան դէմ. ատելութիւնը և վրէժխնդրութեան ոգին՝ քինախնդիր ըլլալու երբ և ուր և իցէ։ Եւ ահա աս ամէն կիրքերը յայտ է թէ ամէն իժիր չմարելու կրակներ են սրտին մէջ, որ անհանգարտ և խռովասէր ոգով մէկ շատ սիրտմաշուք ծփանաց և նախանձայուզութեանց ներքին ալէտանջութեանց և մելամաղձոտութեանց նոր նոր լուցկիքներ կը պատրաստեն, և վերջին կործանումը կը բերեն մարդուս գլխուն։

Ապա բարեկիրթ պատանի մը ասոնցմէ դինքն ազատ պահելու և լաւ մը պաշտպանելու համար, նախապահեստ զգուշութիւններու կարօտ է. որոնց վրայ թէ և դպրոցին մէջ արդէն ազէկ ազէկ ազդարարութիւններ առեր և տեսական հմտութիւններ ստացեր է, բայց աստ և այժմ, որ իր ազատութեան թողուած՝ մարդոց մէջ կը մտնէ կելլէ, գործնական կրթութեան մըն ալ կարօ-

տութիւն ունի՝ի հարկէ. լաւ ճանչնալով իր դիւրասահ բնութիւնը՝ յարատեւական կըրթութեամբ նուաճել սանձել ան չարյօժարութիւնները ունակութիւնները, և բնաւ ազատութիւն չտալով մէկին կամ մէկալին. վասն զի մէկին հրաման տալը՝ ամէնուն միատեղ հրաման տալ է, որով և դուռ բանալ ամէնուն միանգամայն։ Ապա ինչպէս որ բարեկիրթ դաստիարակութեան մտաւորական վախճանն է ամէնմէկ մոլութիւնը մէյմէկ հակադարձ առաքինութեամբ զսպել հնազանդեցընել, նոյնպէս ալ բարեկիրթ պատանիին գործքն է՝ առած մըտաւորական բարեկրթութեան ուսմունքը գործքով ցցընել. որով ճշմարիտ քրիստոնեայ և կատարեալ քաղաքավար կըլլայ մարդս, առ որ միայն ուղղեալ էին ինչուան հոս բովանդակ խօսիցս նպատակը։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI 1922
Ереван, Мясницкая
Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ

ԳԼՈՒԽ Ա. Թէ որչափ յարաչար կը սխալին ծնողք անհոգու

կոչման անխոհեմաբար դէմ դնելով, և միանգամայն դատիարակութեան պարտուց մէջ ինչ ազգարարութիւն-ներու կը կարօտին 33

Գլ. Դ. Թէ բարեկիրթ պատանին դպրոցէն հայրենի տունը դառնալուն՝ առջի անգամ մարդոց հետ կենցաղավարելուն ՝ի՞նչ ճամբայ պիտոր բռնէ, և ո՛ր ուկարգութիւններէն զգուշանայ պիտի 42

Գլ. Ե. Թէ բարեկիրթ պատանին աշխարքիս նոր ծանութիւններուն և սովորութիւններուն մէջ ինչ եղանակ շարժի, և ո՛ր ունայնութիւններէն ետ պիտի կենայ 56

Գլ. Զ. Թէ բարեկիրթ պատանին ինչպէս իր կեանքին զբաղմունքները կարգի դնելու է, և ո՛ր մոլի սովորութիւններէն զինքը զգուշացընելու . . . 63

Գլ. Է. Թէ բարեկիրթ պատանին աշխարքիս վտանգներուն մէջ ինչ զգուշութիւններ պիտոր ընէ, և ինչ ճամբով պաշտպանէ պիտի զինքը 71

Գլ. Ը. Թէ բարեկիրթ պատանի մը աշխարքիս զուարճութիւններուն մէջ ինչ

Ճաշակ և որպիսի ընարողութիւն պիտի ունենայ 83
Գլ. Թ. Թէ բարեկիրթ պատանին հիմակու դարուս մեղանչական հետաքրքրութեան հոգւոյ ինչ միջոցներով պիտի դէմ դնէ 91
Գլ. Ժ. Թէ ընդհանրապէս երիտասարդական բնաւորութեան մէջ որոնք են ինքնակար մոլութիւնները և որ առաքինութեամբ պէտք է դիմաւորել անոնց. 102